

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Մարդու եւ աշխարհագրական միջավայրի փոխադարձ կառը վաղուց հաստատված է գիտությամբ: Այս իմաստով, ինչողես ուսուցանում է հայ դասական ազգայնականությունը, ազգը եւ հայրենիքը Բացարձակի ու Հավերժի հարթության մեջ կազմում են մեկ, անքակտելի ամբողջություն. Հայաստանը մնայուն հայրենիք է միայն հայերի համար, իսկ հայը հարատելի է միայն Հայաստանում: Ըստ այդմ, երբ մասնաւում է հայոց հայրենիքը, խաթարված է նաև հայի էությունը, եւ բանի դեռ չունենի ամբողջական Հայաստան, հոգեբանորեն եւ դիմագծորեն մնում ենք աղճաւված:

Իսկ ո՞րն է հավիտենական Հայաստանը՝ հայոց ամբողջական հայրենիքը, որին, ինչողես ծնողին, չեն ընտրում:

Դա բնաշխարհագրական այն անբաժանելի ամբողջությունն է, որը աշխարհագրական գիտության կողմից կոչվում է Հայկական բարձրավանդակ: Հայկական բարձրավանդակը Աստուց կամ Բնությունից հայերիս տրված այն հողակտորն է, որին են միայն հարազատ եւ բնորու մեր հոգե-մարմնական գծերը: Սա այն բնատարածքն է, հայերիս միակ եւ կայուն «անվտանգության գոտին», որից դուրս այլ «հայրենիքներ» փնտելը ազգային ինքնասղանություն է, որից դուրս՝

ոգու եւ բնատարածի անհամատեղելիության դայմաններում, հայը ենթակա է վատասերումի, ձուլումի:

Հայկական բարձրավանդակն է հայոց հավիտենական հայրենիքը, անկախ այսօրվա ժաղաբական սահմանագծումներից եւ ներկայիս ազգագրական դայմաններից: Հայկական բարձրավանդակի նկատմամբ հայրենասիրոջ մենաշնորհ իրավունքը հայերինս է:

## **ՊԱՐՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ**

### **Ոուրեն Սաֆրասյան**

#### **1. ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

ՊԺԱՄԱՆԱԿԱԿից ԱՄՆ-ում դահլյանողականությունը հանդես է գալիս որպես Երկրի զաղափարական ու բաղաբական կյանքի կարեւոր գործոն, որը զգալի ազդեցություն ունի Երկու հիմնական բաղաբական կուսակցություններից մեկի՝ Հանրապետական կուսակցության ներքին եւ արտաքին բաղաբական մոտեցումների վրա: Մասնավորապես, ուժեղ է նրա ազդեցությունը ներկայիս նախագահ Զորշ Բուժ-կրստի վարչակազմի վրա:

Միաժամանակ, դահլյանողական զաղափարները եւ արժեքները դրականորեն են ընդունվում բնակչության լայն խավերի կողմից: Վերջին տասնամյակների ընթացքում դարբերաբար կատարվող հարցումների արդյունները կայունորեն վկայում են, որ Երկրի բնակչության շուրջ մեկ երրորդը իրեն համարում է դահլյանողական հայացքների եւ արժեքների կրող: Որու տարիներ այդ թիվը նույնիսկ անցնում է 40 տոկոսից:

Այս ամենը վկայում է, որ ժամանակակից ԱՄՆ-ը աշխարհի ամենապահպանողական Երկրներից մեկն է: Պատահական չէ, որ արտերկրում, մանավանդ Արեւմտյան Եվրոպայում, հասարակական գիտակցության մեջ ամերիկացիների վերաբերյալ գոյություն ունեցող ընկալման ստերեոտիպներից է դատկերացումը նրանց մասին՝ որպես

դահլիճանողական ժողովրդի, ի տարբերություն իրենց՝ Եվրոպացիների:

Առաջին հայացքից, եթե հաշվի չեն առնվում ամերիկյան դահլիճանողականության առանձնահատկությունները, այս ամենը կարող է զարմանալի թվալ. չէ՞ որ ԱՄՆ-ը հիմնադրվել է դահլիճանողականության հզոր հակառակորդի՝ ազատականության գաղափարախոսության վրա հիմնված հեղափոխության հաղթանակի արդյուննում, իսկ ժողովրդի ընկալումներում իշխում էր առաջընթացի եւ ազատականության հանդեռ անսասան հավատը: Մինչեռ, դահլիճանողականությունը ԱՄՆ-ում զգալի տարբերվում է իր Եվրոպական նախօրինակից եւ գաղափարակցից:

Այսու, Եվրոպական եւ հյուսիսամերիկյան դահլիճանողական մատչելակերպի ընկալումների մեջ գոյություն ունի մի հիմնարար տարբերություն: Ժամանակակից ամերիկացիները անհատի ազատությունը համարում են իրենց հասարակության ավանդական արժեքը, եւ այդ դաշտառով այն բաղաբանությունը, որը կարող է մեկնաբանվել որդես անհատի ազատությունների ընդլայնում, հաճախ ընկալում է որդես դահլիճանողական: Օրինակ, ԱՄՆ-ում թմրադեղերի օգտագործման սահմանափակումների մեջմանն ուղղված բաղաբանությունը բնակչության որոշ խավերի, ինչուս նաև իրենց դահլիճանողական համարող շատ կազմակերպությունների կողմից մեկնաբանվում է որդես... դահլիճանողական, բանի որ դիտվում է անհատի ազատության նկատմամբ սահմանափակումների վերացման բաղաբանության ժաշականական նմանատիպ բարեփոխումների օգտին կարող են ոլորտում նմանատիպ բարեփոխումների օգտին կարող են

հանդես գալ ազատականները, կամաչները, նույնիսկ սոցիալ-դեմոկրատները, բայց ոչ մի դեղում դահղանողականները:

Ամերիկյան բաղաբական դահղանողականության մյուս առանձնահատկությունը նրա գաղափարական ու կազմակերպական խայտարդետությունն է: Այս, ի տարբերություն եվրոպականի, դեռևս չի ձեւավորվել՝ իրեւ կայուն, լավ մշակված գաղափարական-բաղաբական ուսմունք, հանդես է գալիս հեղիեղուկ տեսով՝ շատ դեղբերում ձեւափոխվելով եւ սամալով այլ գաղափարական-բաղաբական ուսմունքներին հատուկ տես: Դա վկայում է նրա գաղափարական «դեռահասության» մասին:

Սակայն մերօյա ամերիկյան դահղանողական կազմակերպությունների, խմբավորումների, վերլուծական կենտրոնների, դարբերականների, ինսերնետային սայթերի թվաբանակը անցնում է երկու հարյուրից, եւ նրամբ մինյանց միջեւ մղում են անզիջում դայքար՝ հավակնելով կրելու «իսկական» կամ «անաղարտ» դահղանողական արժեների միակ դաշտանի տիտղոսը: Իրականում, նրանցից շատերը, արձագանքելով բաղաբական կյանքի իրադարձություններին, ժամանակ առ ժամանակ որդեգրում են այնոիսի դիրքորոշում, որը հակասում է դահղանողականության գաղափարախոսության հիմնարար սկզբունքներին: Այսինքն, օրինակ, երբ դարզվեց, որ էժան չինական աղրանքները ներխուժում են ամերիկյան շուկա, ինչը հանգեցնում է ամերիկյան արտադրության աղրանքների դուրսմղմանը եւ աշխատատեղերի դակասեցմանը, աղա շատ դահղանողական կազմակերպություններ սկսեցին հանդես գալ կառավարության կողմից միջամտության ու

հիվանդավորչական բաղաբականության որդեգրման օգտին, ինչը, ըստ էռլեյան, հակասում է հենց ամերիկյան դահլիճանողական բաղաբականության սկզբունքային մոտեցումներին, որի ծետավորման կարեւոր խթան է ժամանակին հանդիսացել դայլարը նախագահ Ֆ. Ռուզվելտի՝ ուղարկած կարգավորման սկզբունքի վրա հիմնված «նոր կուրսի» դեմ:

Ինչու արդեն նույնական թվականներից դահլիճանողական արժեքների կրող է համարվում Հանրապետական կուսակցությունը: Սակայն բացառությամբ Ո. Ռեյգանի նախագահության տարիների, նույնիսկ իրենց իշխանության շրջանում հանրապետական-ներին չի հաջողվում համախմբել տվյալ դահին երկրում գործող հիմնական դահլիճանողական խմբավորումներին: Նույն դատկերն է նաև ներկայիս ԱՄՆ-ում. Բութի բաղաբականության կատաղի բննադատների թվում են նաև մի շարք հեղինակավոր դահլիճանողական կազմակերպություններ ու գործիչներ:

Սակայն վերը նշված խայտաբղետ բազմազանության մեջ գոյություն ունի գաղափարների, ընկալումների ու մոտեցումների մի կորիզ, որը եւ բնութագրական է ամերիկյան դահլիճանողականության համար:

Դրանց թվում առաջին հերթին անհրաժեշտ է նշել հավաքը անհատի դատախանածվության նկատմամբ: Պետության հիմքը, ըստ դահլիճանողականների, կազմում է ազատ անհատը, որը դատախանատու է Ասծոն եւ հասարակության նկատմամբ: Միաժամանակ, նրանք դեմ են դետության միջամտությանը սնտեսական եւ սոցիալական կյանքի ոլորտներ:

Ամերիկյան դահլիճանողականների շրջանում լայն տարածում ունեն քրիստոնեական եւ հուդայական կրոնական,

բարոյական արժեքները, որոնք համարվում են ուժիվերսալ եւ անվիճելի:

Նրանք կարեւոր են են հատկացնում ուժեղ իրավադահ համակարգին եւ հանցագործությունների համար խիս դաշիճներին: Ի տարբերություն ազատականների, դահլյանողականների բարոզչության մեջ մեծ են է գրադարձնում կարգուկանոնի դահլյանան անհրաժեշտության թեզը: Նրանք հանդես են գալիս նաեւ որդես հզոր զինված ուժերի եւ բարձր ռազմական ծախսերի կողմնակիցներ: Պահանջում են նաեւ ավելի խստացնել երկրի սահմանների հսկումը:

Տնտեսական ոլորտում ամերիկյան դահլյանողականների հայացքները որու չափով մոտ են Եվրոպական ազատականների նոտեցումներին, նրանք կողմնակից են հարկերի իշեցմանը եւ սովորաբար դահանջում են կառավարության նվազագույն ներգրավվածություն ռուկայի կարգավորմանը: Նրանք ընդդիմանում են դետության կողմից բժժկական աղահովագրման ու օգնության լայնածավալ սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Ամերիկյան դահլյանողականության կարեւոր դահանջներից է ներգաղթի հնարավորինս սահմանափակումը: Այն, որդես կանոն, բննադատում է դեմոկրատների՝ ամերիկյան բնակչության եթնիկական առանձին խմբերի գոյությունը դահլյանող կամ էլ դղրցներում բազմաթիվ կրթություն թույլատրող բաղադրականությունը: Ռեմոկրատների այդ բաղադրականությունը դահլյանողականների կողմից բնութագրվում է որդես ոչ հայրենասիրական:

Ամերիկյան դահլիճականության կարելորագույն դահլիճներից է ֆաղաքիների զենք կրելու իրավունքի աղափողությունը, ինչը, ըստ նրանց, բխում է սահմանադրությունից: Կարեւոր տեղ է հատկացվում նաև դեմոկրատների որդեգրած համասեռության եւ աբորտների օրինականացման ֆաղաքականության դեմ դայլարին: Բոլոր դահլիճականները, ընդհանուր առմանք, համամիտ են ավանդական բարոյական արժեների դահլիճանան հարցում, սակայն մինչյանցից մեծապես տարբերվում են այդ արժեների մեկնաբանության մեջ:

Որոշ թեմաներ, որոնք ժամանակին կարեւոր տեղ էին գրադեցնում դահլիճականների գործունեության մեջ, ներկա դայմաններուն կորցրել են իրենց այժմեականությունը: Դրանցից է, օրինակ, ռասայական սեգրեգացիայի դաշտանությունը: Այսօր ԱՄՆ-ում դժվար թե գտնվի որևէ լուրջ դահլիճական գործիք, որը հանդիս զա հասարակական կյանքում սեւամորթների եւ սոլիտարականորթների տարանջատման օգտին, թեև տասնամյակների ընթացքում այդ հարցը եղել է դահլիճական ֆաղաքականության կարելորագույն թեմաներից մեկը:

*Հարուսակելի*

## **ԱՄՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ Գագիկ Տեր-Յարությունյան**

Այսօր ստեղծվել է մի իրադրություն, երբ համաշխարհային գործընթացները հիմնականում թելադրվում են մեկ գերտերության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից: Ըստ էության այլ տերությունների բաղադրականությունը յուրովի արձագանքն է ԱՄՆ գործողություններին: Ակնհայտ է, եւ դա բազմիցս արծարծվել է վերլուծական գրականությունում, որ իսլամական գործոնի դեմ ներկայիս ղայթարը բաղադրական բնույթ ունի եւ ընդամենը ԱՄՆ կողմից գլորալ գերակայության հասնելու բայլերից մեկն է: Այս իր մեջ ղարունակում է գործողություններ, որոնք անմիջականորեն կամ միջնորդված ուղղված են Եվրոպական, ռուսական եւ չինական բաղադրակրությունների դեմ:

Իր հերթին ԱՄՆ նման բաղադրականությունը ձեւավորում է դիմադրության կենտրոններ ողջ աշխարհում, եւ դրան հատկապես հետամուտ են ավանդական տերությունները:

### **Իրաֆի նվաճման ռազմաբաղադրական նշանակությունը եւ հետևանքները**

2003-ի ամենախոշոր ռազմաբաղադրական իրադրությունը, անկասկած, ԱՄՆ եւ նրա դաշնակիցների կողմից իրաֆի նվաճումն էր: Այդդիսով էապես փոխվեց ուժերի հավասարակշռությունը ոչ միայն Մերձավոր

Արեւելքում, այլ նաեւ ողջ աշխարհում: Իրազործելով այդ բայլը՝ ԱՄՆ-ը ամրագրեց հետեւյալ իրողությունները.

• Միացյալ Նահանգները այսօր միակ գերտերությունն է, որը կարող է՝ արհամարհելով գոյություն ունեցող միջազգային նորմերը, իրազործել այն ամենը, ինչ թիում է սեփական ազգային ժահերից: Միեւնույն ժամանակ գրավելով Իրաֆը, ԱՄՆ-ը նաեւ հաստատեց, որ բաղաբական, ռազմական եւ սննդսական բոլոր կարգի հարցերում նա սատար է կանգնելու իր ռազմավարական դաշնակցին՝ Խորայելին: Ավելին, այսօր ժամերն են հակված կարծելու, որ «ԱՄՆ ազգային ժահ» բազմաբաղադրիչ եւ բազմաբնույթ հասկացությունն իր մեջ ներառում է ոչ միայն անգլոսախոնյան բաղաբակրության, այլ նաեւ խորայելական ժահերը:

• Ամրապնդվելով Իրաֆում՝ ԱՄՆ-ը հաստատեց իր գերակայությունը էներգառեսուրսներով հարուս այդ տարածաշրջանում: ԱՄՆ ներկայությունը Իրաֆում թույլ է տալիս նրան անմիջականորեն վերահսկել իրադրությունը ողջ արաբական աշխարհում՝ Սաուդյան Արաբիայում, Սիրիայում, Արաբական էմիրաթներում եւ այլուր: Դատկանական է, որ ԱՄՆ-ը (Սեծ Բրիտանիայի հետ համատեղ) ստիղեց Լիբիային իրադարակայնորեն իրաժարվել զանգվածային ոչնչացման գենֆ ստեղծելու ծրագրերից:

• Կենտրոնացնելով գորամիավորումները Իրաֆում՝ ԱՄՆ ճնշումները հարեւան Իրանի նկատմամբ ավելի արդյունավետ են դարձել: Իրանը ստիղված էր ստորագրել Առողջապահության միջազգային գործակալության (ԱԵՄԳ) «լրացուցիչ արձանագրություն»-ը, համաձայն որի՝ վերջինս իրավունք է ձեռք բերում առանց նախազգուշացումների

ստուգումներ անցկացնել իրանի ցանկացած միջուկային եւ ոչ միջուկային օբյեկտներում: Այսղիսով իրանը զգալի չափով ներփակվեց միջազգային իրավունքի դաշտ, որտեղ նրա կողմից կատարվող հնարավոր զանցաները միջուկային ծրագրի իրագործման ուղղությամբ կարող են հանգեցնել դաշտամիջոցների կիրառման, ընդհույթ մինչեւ կասկածելի օբյեկտների ռմբակոծման:

• Տարածաշրջանի եներգառեսուրսների վրա ուժային վերահսկում սահմանելով՝ ԱՄՆ-ը փաստուեն դուրս մղեց իրավից ֆրանսիային եւ Ռուսաստանին՝ միաժամանակ իր ծերպին դադիւն ասիական զարգացող տերությունների՝ Չինաստանի եւ Հնդկաստանի նավթի մատակարարման մերձավորարեւելյան «ծորակը»: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ ճաղոնիան, իր եներգետիկ անվտանգությունից ելնելով, սիրոված եղավ, ինչ-որ տեղ խախտելով սեփական սահմանադրությունը (որն արգելում է զինուժ ուղարկել ճաղոնիայի սահմաններից դուրս), աջակցել ԱՄՆ-ին եւ իր զինուժը (թվով մոտ հազար զինծառայող) ուղարկել իրավ:

Միեւնույն ժամանակ ԱՄՆ ոլանները տարածաշրջանում չեն սահմանափակվում իրավի նվաճումով: Վերջերս վաշինգտոնում լույս տեսավ Պենտագոնի բարձրաստիճան ներկայացուցիչը, ներկոնսերվասոր Ռիչարդ Պերլի եւ նախագահ Բուլշի նախկին «ստիչոայթեր» (ելույթները գրող) ու «չարիֆի առանցք» հասկացության հեղինակ Դեկիդ Ֆրումի «Զարիֆի վերջը. ինչո՞ւս հաղթել ահաբեկչությանը» մանիֆեստային բնույթի գիրը: Այդ գրքում հեղինակները անմիջական ցուցումներ են տալիս Բուլշին եւ ամերիկյան համրությանը, թե անհրաժեշտ է «անջատել» Սաուդյան Արաբիայից նավթով հարուստ տօջանները, «դաշտել» Սիրիային,

«փոխել» իրանի վարչակազմը եւ այլն: Բնորոշ է, որ գրքում ԿՅՎ-ն եւ Պետդեղարտամենտը մեղադրվում են «անվճռականության» մեջ: Նույն ուժերի կողմից հայտարարություններ են արվում այն մասին, որ ԱՄՆ-ը թույլ չի տա, որ «Եգիպտոսում ընտրությունների արդյունքում իշխանության գան մահմեղական ծայրահեղականները»: Դայտնի են նաև հեռանկարային այն ծրագրերը, համաձայն որոնց գործնականում բոլոր արարական երկրները դեմք է վերաձեւվեն եւ բաժանվեն մասերի՝ համաձայն էթնիկական եւ կրոնական հատկանիւնների: Դամաձայն որոշ ամերիկյան վելուծաբանների, կանխատեսվում են դատերազմական գործողություններ Իսրայել-Սիրիա եւ Իսրայել-Իրան վելետուներով՝ զանգվածային ոչնչացման զենիք օգտագործմամբ: Նկատենք նաև, որ հարձակողական ժաղաքականություն վարող եւ նման ծրագրեր մշակող ներկունսերվատորները այսօր ամերիկյան «իստերլիթմենթի»՝ ժաղաքական ընտրանու ամենաազդեցիկ եւ որոշիչ ուժերից են: Ամերիկյան մամուլի հրադարակումները հավասում են, որ Զ. Բութի վերընտրման դարագայում նրանց դիրքերը ել ավելի են ամրապնդվելու:

Սակայն, գուգահեռ այս ամենին, ԱՄՆ վարած ռազմավարությունը եւ մասնավորապես իրավայան դատերազմը հարուցեցին դիմադրական մի գործընթաց՝ ուղղված այդ գերտերության դեմ: Նշենք այդ գործընթացի արտահայտություններից մի բանիսը.

• ԱՄՆ գործելածները արագացրեց Ֆրանսիայի, Գերմանիայի եւ նրանց ժուրջ համախմբված մի շարժ այլ եվրոպական ժերությունների տարանջատումը ԱՄՆ-ից եւ նրա վարած ժաղաքականությունից: Դատկանշական է, որ ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի «Գլոբալ միտումներ

2020» կանխատեսական բնույթի փաստաթղում ասվում է այն մասին, որ նման քաղաքակրթական, տնտեսական եւ քաղաքական խզումը աղագայում միայն խորանալու է:

• Այս գործընթացին զուգահեռ սկսեցին նշնարվել Եվրոպական վերոհիշյալ Երկրների, Ռուսաստանի, Չինաստանի եւ Իրանի, այսինքն՝ Եվրասիական մայրցամաքի խուռ ավանդական ժերությունների այս կամ այն չափով փոխսահամաձայնեցված դաշտանողական գործողությունները: Այդ Երկրները առանձին-առանձին, իսկ Երեմն նաեւ համատեղ, մշակում են ռազմավարություն ԱՄՆ էխողանսիոնիզմի դեմ, ինչի ընորհիվ մասնավորաբես հնարավոր դարձավ ժամանակավորաբես կանգնեցնել ԱՄՆ ռազմական առաջխաղացումը Մերձավոր Արեւելիում՝ Իրանի ուղղությամբ: Ռուսաստանի, ԵՄ-ի եւ Իրանի համաձայնեցված քաղաքականության համատեսում դեմք է դիտարկել նաեւ այն հանգամանքը, որ վերջերս ԱԵՄԳ դեկավար Ել-Բարադեյը առաջին անգամ հրադարակայնորեն կարծիք հայտնեց այն մասին, թե ԱԵՄԳ ստուգումների կարիք ունի նաեւ իրայելի միջուկային ծրագիրը:

• Որոշակացան եւ նյութականացվեցին տնտեսական այն միտումները, որոնք տանում են դեռի ամերիկյան դոլարի՝ որդես համաշխարհային հիմնական արտարժույթի մենաշնորհի վերացնանքը: Ներկայումս դոլարի հետ մրցակցում է Եվրոն, աղագայում կարելի է սղասել, որ կիզորանան յուանը եւ գուցե անգամ ռուբլին: Դատկանաւական է, որ ՕՊԵԿ-ի օրշանակներում սաստկացել են խոսակցություններն այն մասին, որ նավթային գործարքներում դոլարը դեմք է փոխարինվի Եվրոյով: Դամաձայն տնտեսագետների, դոլարի մենաշնորհային

համակարգի անկումը կարող է հանգեցնել ԱՄՆ տնտեսական խորը ճգնաժամի:

• ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի վարած քաղաքականության հետևանքով միջազգային հանրությունում աճել են հակաամերիկյան եւ հակահրեական տրամադրությունները: Այս առիթով Իտալիայի ԱԳՆ-ն անգամ դիմել է ԵՄ-ին, որդեսզի համատեղ հանձնաժողով ստեղծվի՝ Եվրոպայուն հակասեմիտական արտահայտումների հարցը բնարկելու համար: Այդ առաջարկությունը մերժվել է: Իրենց հերթին հրեական կազմակերպությունները խոստացել են այդ հարցը մտցնել ՄԱԿ օրակարգ:

«ԱՄՆ – մնացյալ աշխարհ» սրացող մրցակցային իրավիճակը թույլ է տալիս դիտողներին ներկայիս ընդիհանուր իրավիճակը գնահատել որդես «սարը խաղաղություն»: Նկատենք նաեւ, որ եթե ԱՄՆ-ին ընդդիմադիր երկրների վարած քաղաքականությունը ընթացիկ իրավիճակներից կախված կարող է էակես տատանվել, առաջ ԱՄՆ վարած ռազմավարությունը խստորեն ենթարկվում է որոշակի աշխարհագործական եւ աշխարհանտեսական յուրովի տրամադրության եւ չի ենթադրում որեւէ նահանջ կամ խուռը օեղում նախադես ծրագրավորված ուղղությունից: Դա այս կամ այն չափով կանխատեսելի է դարձնում ԱՄՆ քաղաքականությունը 2004 թվականին:

## **Քաղաքական կարծաժամկեց կանխատեսումներ ԱՄՆ ռազմավարության համատեսում**

ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները, ինչպես նշեցինք վերը, շարունակելու եւ զարգացնելու են իրենց ներկայի եվրասիական նախաձեռնությունը: Ընդգծենք, որ այսօր եւ ԱՄՆ-ում, եւ Մեծ Բրիտանիայում այդ երկրների ներկայի դեկավարության դեմ ձեւավորված ընդդիմության ներկայացուցիչները իրենց հեղինակությամբ զգալիորեն զիջուն են հարձակողական բաղաբականություն վարող Բուժին եւ Բլերին: Այսինքն՝ մոտ աղազայում (եթե արտաքո ոչինչ չղատահի) կարելի է սղասել, որ անգլո-սախոնյան կուլիցիայի դեկավարությունը կմնա անփոփոխ: Միեւնույն ժամանակ դեսք է հաշվի առնել, որ ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի ռազմավարության կախվածությունը կրնկես անձերից եական բնույթ չի կրում: Այսինքն՝ եթե ընտրությունների արդյունքները այլ լինեն, դա չդեսք է որակադես ազդի առկա ծրագրերի իրագործման վրա:

ԱՄՆ եւ նրա հիմնական դաշնակիցների բաղաբականությունը եվրասիայում ենթադրում է հետեւյալ գործողությունները.

- Եվրոպայում ԱՄՆ հիմնական նղատակն է լինելու միասնական եվրոպական գերերության ձեւավորման խափանումը: Նման բաղաբականության դրսեւորումն է վերջերս ԱՄՆ ջաներով եւ Լեհաստանի ձեռքերով եվրոպական սահմանադրության ընդունման տաղալումը: Այս համատեսում ԱՄՆ-ը ձգտելու է, որդեսզի խորացվեն հակասությունները Գերմանիայի, Ֆրանսիայի, նրանց հարող որոշ արեւմտաեվրոպական դետությունների եւ Արեւելյան ու Հարավային եվրոպայի երկրների միջև:

• Այս համատեքստում ԱՄՆ համար կարելոր խնդիր է զուտ Եվրոպական «արագ արձագանքման» գինված ուժեղի ստեղծման խափանումը: Սակայն այստեղ Ֆրանսիային հաջողվել է համաձայնության որոշակի եզրեր գտնել այդ ծրագրի հիմնական ընդդիմադիր Մեծ Բրիտանիայի հետ, եւ այս «ճակատում» թերեւս տիրի «դիմամիկ հավասարակշռություն»: Միեւնույն ժամանակ դեմք է նշել, որ Մեծ Բրիտանիան միօց համարվել է ԱՄՆ կողմից Եվրոպայում ներդրված «տրոյական ձի»:

• Առանձնադես մեծ տեղ է հատկացվելու Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ ուրվագծվող ռազմաբաղաբական եւ սնտեսական հարաբերությունների խարխլմանը: Այս առումով ԱՄՆ-ը ձգտելու է, որդեսզի Եվրոպա-Ռուսաստան հարաբերությունների զարգացման անխուսափելի ծանրությունն ընկնի իր կողմից վերահսկվող երկրների, մասնավորապես Իտալիայի վրա: Սակայն 2003թ. միտումները թույլ են տալիս կարծել, որ Փարիզ-Բեռլին-Մոսկվա առանցքը իր հետագա զարգացումն է աղբելու:

• Արեւելյան Եվրոպայի հետխորհրդային ենթարածառչանում ԱՄՆ-ը ձգտելու է վերափոխել Ռուսաբանական, Մոլդովայի եւ Բելառուսի ռուսական կողմնորոշում ունեցող ներկայի վարչակարգերը: Նշենք, որ այս համատեքստում առանձնակի տեղ է հատկացվելու ուկրանական հարցին: Որդես բաղաբական տեխնոլոգիա օգտագործվելու է «դեկավարվող բառ» հայեցակարգը: Այն ընդունելու է ժողովրդական զանգվածների կողմից իրագործվող «բավայա» հեղափոխությունների տեսք, որն ցույց է կարեւոր դեր է խաղալու ազգայնական՝ Ռուսաստանի դեմ ուղղորդված գործոնը: Միեւնույն

ժամանակ փաստեմ, որ ԱՄՆ բաղաբականությունը հանդիդելու է Ռուսաստանի աճող դիմադրությանը, ինչի օրինակն է վերջերս Պուտինի եւ Կուչմայի կողմից Ազովի ծովի եւ Կերչի նեղուցի համատեղ օգտագործման վերաբերյալ կմքված համաձայնագիրը։ Եթե Ռուսաստանին հաջողվի արդիականացնել իր ռազմավարությունը ԱՊՀ երկրներում, աղա այսեղ կարելի է սղասել ԱՄՆ առաջընթացի կասեցմանը։

- ԱՄՆ-ը շարունակելու է լայնացնել իր ռազմավարական ներկայությունը Հարավային Կովկասում, որպես մաս Մեծ Մերձավոր Արեւելք գերարածաւթանի։ Կարելի է սղասել, որ ոչ շատ հեռու աղագայում Աղրբեջանում կստեղծվի ամերիկյան ռազմաօդային հենակայան։ Շարունակվելու է ԱՄՆ կողմից տարածաւթանային բաղաբականության որոշակի վերաբարձրացնելունը։ նախկինում Թուրքիային վերագրվող որոշ ֆունկցիաներ գուցեեւ տրվեն Աղրբեջանին։ ԱՄՆ-ը ձգտելու է զարգացնել Վրաստանում ձեռք բերված հաջողությունները, եւ այս համատեսում կարելի է սղասել իրադրության սրացում Թբիլիսիի եւ նախկին ինքնավարությունների միջեւ։ Այս ամենին ակտիվորեն հակազդելու է Ռուսաստանը՝ զուգահեռաբար փորձելով համաձայնության եղեր գտնել ԱՄՆ-ի հետ կոնկրետ հարցերի ուլոց։

Հայտնի է, որ այսօր Հայաստանը Ռուսաստանի միակ հենակետն է տարածաւթանում։ Հաւաքի առնելով ուրվագծվող ԱՄՆ-Ռուսաստան «սառը դատերազմը»՝ չի կարելի բացառել, որ ՀՀ-ն կարող է հայտնվել այդ մրցակցության կիզակետում։ Այս համատեսում որոշակի

հետարրություն են ներկայացնում ամերիկյան «ՌԵՆԴ» վերլուծական կենտրոնի կողմից մշակված հնարավոր սցենարները: Համառոտ ներկայացնեն դրանցից մեկը:

Որոշակի նկատառումներից ելնելով՝ ամերիկյան զորամիավորումը Վրաստանում, լրիվ կամ մասնակիորեն, փոխարինվում է թուրքականով: Իրենց հերթին հնարավոր «ահարեկիչները» հարձակում են կազմակերպում Բարութբիլիսի-Ձեյհան նավթամուղի վրա: Ահարեկիչների դեմ Վրաստանի կողմից ձեռնարկված դատիչ ժայլերի հետևանքով ռազմական գործողությունների մեջ են ներփակում ռուսական զորամիավորումները, աղա եւ Ադրբեջանի զինված ուժերը: Այստիսով, սկսվում է ռազմական բախում Ռուսաստանի եւ Վրաստանի ու Ադրբեջանի միջեւ, որի մեջ այս կամ այն չափով ներփակում են տարածաշրջանային բոլոր երկրները: Խնդիրը լուծելու նղատակով տարածաշրջան են մուտք գործում ամերիկյան «խաղաղարար» զինվորական ստորաբաժանումները:

Աճուրծ, վերը ներկայացվածը տեսական մշակում է: Առկա են նաեւ որու դայմանականություններ: Մասնավորապես, Բարութբիլիս-Ձեյհան նավթամուղի վրա հարձակումը սցենարի մեջ մտցված է փոքր-ինչ արհեստականութեն. ամերիկյան վերլուծաբանները, թերեւս, լավ գիտեն, որ նավթամուղն ունի ավելի աշխարհաբական, բան տնտեսական նշանակություն: Դժվար է ասել, թե այդ խողովակաւորվ երբ նավթ կտեղափոխվի: Ավելի հավանական է դատկերացնել հնարավոր ռազմական գործողությունները մեր տարածաշրջանում՝ որդես հետևանք Վրաստանում, մասնավորապես Զավախում ռուսաստանյան ռազմակայանների դեմ

կազմակերպված սադրանժների, ինչողևս որ դա սովորում  
են իրագործել վրաստանյան որոշ բաղադրական ուժեր:

## ՌՈՒՍԱՍՏԱՆ. *ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՉԼՈՒԾՎԱԾ ՔԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ*

### *Գագիկ Տերտերյան*

Այսօր կարելի է ամրագրել, որ Ռուսաստանը վերսին մասնակցում է աշխարհաքաղաքական սուր մրցակցությանը, որը եվրասիական վելուծաբաններն անվանում են Նոր սառը դասերազմ, իսկ նրանց ամերիկյան գործընկերները՝ Սառը խաղաղություն: Բնականորեն այդ մրցակցությունն ընթանում է նաև տնտեսական ոլորտում: Պեսֆ է նույնին, որ ներկայումս տնտեսական հզորությունը ենթադրում է ոչ միայն զուտ ֆինանսական կամ զուտ առեւտրապարհունարթերական ներուժի առկայություն. այսօր, ավելի բան երբեմն է գիտաժողությունը և առաջարկությունը առաջարկությունը: Դիմումը պատճենաբար պատճենաբար է առաջարկությունը:

## Դրական միտումներ

Վերջին տարիներին Ռուսաստանի տնտեսությունում զգալի աճ է գրանցվել: Համաձայն որոշ վելլուծաբանների կանխատեսումների, այդ երկրի ՀՆԱ-ն (համախառն ներփական արդյունքը), որը նախորդ տարի կազմել է ավելի քան \$0,5 տրիլիոն, կարող է այս տարի աճել մինչեւ 10% չափով, եւ խնդիր է դրված մինչեւ 2010 թվականը կրկնադարձել այն: Տնտեսության վերելքը զգալիորեն բարելավել է ներդրումային գործընթացը: Ինչորս հայտնի է, 2003թ. հոկտեմբերին «Մուլիս» միջազգային ռեյթինգային գործակալությունը Ռուսաստանին «դրական ներդրումային վարկային ռեյթինգ» շնորհեց: Սակայն այդ առիթով փորձագետները նշում էին, որ այլ ազդեցիկ վարկանիշային գործակալությունները, մասնավորապես «Ֆիչ Ռեյթինգ»-ը դեռ չեն բարձրացնում Ռուսաստանի տնտեսությանը և վաճառքի իրենց գնահատականը: Անցյալ տարվա դեկտեմբերին այդ գործակալությունը նույնութեան բարձրացրեց Ռուսաստանի վարկանիշը վարկերի, սեփական արժույթի եւ արտարժույթի ոլորտում: Այս հանգանակությունը ինչորս նաեւ ՕՊԵԿ-ի (այս կազմակերպությունը վերահսկում է նավթի համաշխառական շուկայի 40%-ը) այն որոշումը, համաձայն որի դեմք է դահլիճանվի նավթի գների ներկայիս մակարդակը (միջինը \$28,5 մեկ բարելի համար), բավական աշխուժություն է առաջացրել ռուսաստանյան տնտեսական կյանքում:

Այս առիթով նշենք, որ տնտեսագետները գտնում են, որ «գրոյից» սկսած մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսության համար դահլիճվում է 15–20 տարի, որդեսզի այն սկսի բնականոն զարգացում աղբել. Ռուսաստանը այդ ժամանակահատվածը փաստորեն անցել է: Համաձայն

«Գոլդման Սաքս» ներդրումային բանկի փորձագետների, եթե Ռուսաստանի սնտեսությունը զարգանա ներկայիս տեմպերով, աղա այդ երկիրը կհասնի իշալիային 2018թ., ֆրանչային՝ 2024թ., Մեծ Բրիտանիային՝ 2027թ., իսկ Գերմանիային՝ 2028թ.: Թերեւս այլ դարագաներում նման ցուցանիշները կարելի եր համարել դրական: Սակայն ցանկացած սնտեսական ցուցանիտ դեմք է դիտարկել համեմատության համատեխսում:

### **Անհանգուացնող իրականություն**

Այսօր ԱՄՆ ՔՆԱ-ն կազմում է ավելի քան \$9 տրիլիոն, իսկ ռազմական բյուջեն, որին անհրաժեշտ է ավելացնել իրավում ամերիկյան ռազմական ներկայությունը աղահովող ծախսերը, արդեն իսկ կազմում է մոտ \$0,5տրիլիոն: Այսինքն՝ այդ ցուցանիշը մոտ է Ռուսաստանի ՔՆԱ ցուցանիշին: Ակնհայտ է, որ այս իրողությունը ընկալում են նաև ռուսաստանյան իշխանությունները, եւ սնտեսության վերը հիշատակված դրական միտումները նրանց չեն կարող բավարարել:

Քայսնի է, որ ներկայումս Ռուսաստանի արտահանման գգալի մասը կազմում են էներգետիկ եւ այլ բնույթի բնական դաշտաները: Միեւնույն ժամանակ արդեն այսօր կան բոլոր նախադրյալները (դրա մասին են վկայում, մասնավորապես, ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի կանխատեսումները), որ ոչ այնքան հեռու աղագայում էներգետիկայի բնույթը որակական փոփոխությունների է ենթարկվելու եւ նոր, այսուհետ կոչված «թվային» հասարակարգում նման հումքի դահանջը էադես նվազելու է: Որպես հետեւանք՝ էադես նվազելու են նաեւ

Ռուսաստանի եկամուտները: Այս համատեխնոլոգ ուժագրավ են հետևյալ փասերը:

Ներկայումս Ռուսաստանի, ինչպես եւ ԱՊՀ մնացյալ երկրների սնտեսությունը հիմնականում գտնվում է արդյունաբերական-տեխնոլոգիական զարգացման այսղես կոչված 4-րդ փուլում կամ մակարդակում (բարձրագույն մակարդակը 6-րդն է): Նշենք նաեւ, որ ԱՊՀ երկրների սնտեսության մի զգալի հատված դեռեւ գտնվում է զարգացման 3-րդ մակարդակում, եւ դա այն դարագայում, երբ զարգացած, «մեծ խանյակի» երկրների ԴՆԱ 50%-ը ծեռավորվում է այն ծեռնարկությունների միջոցով, որոնք գործում են տեխնոլոգիական զարգացման 5-րդ փուլին բնորոշ մակարդակում: Մինչդեռ Ռուսաստանում 5-րդ փուլին համադրասխանող ծեռնարկությունները աղահովում են ԴՆԱ ընդամենը 5%-ը, այսինքն՝ այս ցուցանիշով այդ երկիրը հետ է մնում 10 անգամ: Նշենք, որ ներկայումս «խանյակի» երկրները ակտիվորեն աշխատում են 6-րդ փուլ «տեղափոխվելու» ուղղությամբ:

Նման իրադրությունը գիտաբար տեխնոլոգիաների բնագավառում դայնանավորված է այն իրողությամբ, որ Ռուսաստանում, ինչպես նաև ԱՊՀ մյուս երկրներում, վերջին 10-15 տարվա ընթացքում հիմնովին աղամոնտաժվել են գիտատեխնոլոգիական ենթակառուցվածքները: Թերեւս ուժագրության արժանի է այն փաստը, որ միայն Բելառուսին է հաջողվել դադարանել իր գիտատեխնոլոգիական ներուժի զգալի մասը, եւ այդ դաշտառով նրա գիտաբար տեխնոլոգիաների միջոցով ստացված արտադրանի տեսակարար կշիռը գերազանցում է ռուսաստանյան համադրասխան ցուցանիշին: Վերջին ժամանակահատվածում Ռուսաստանը զգալիորեն մեծացրել է գիտահետազոտական

Եւ փորձնական-կոմստրուկտորական մօակումների (ԳՅՓԿՄ) ֆինանսավորումը, սակայն հատկացվող գումարները դեռ հեռու են զարգացած Երկրների համար ընդունվածից: Ներկայացնեմ հետևյալ թվերը:

Ոուսաստանը ԳՅՓԿՄ վրա ծախսում է \$12 մլրդ եւ այդ ցուցանիշով չի մտնում զարգացած Երկրների տասնյակի մեջ: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ այդ նորակմներով ծախսում է \$282 մլրդ, ճաղոնիան՝ \$103 մլրդ, Չինաստանը, որը երրորդ տեղից դուրս է մղել Գերմանիային՝ \$60 մլրդ: Նշենք նաեւ, որ ՀՆԱ-ից ԳՅՓԿՄ վրա ամենամեծ բաժինն է հատկացնում Խորայելը՝ 4,8%, երբ միջին ցուցանիշը «խանյակ»-ի Երկրների համար կազմում է 2,33%, իսկ Ոուսաստանում այդ ցուցանիշը հավասար է 1,16%: Միեւնույն ժամանակ հատկանշական է, որ Ոուսաստանը ունի գիտատեխնիկական ոլորտի 505 հազար մասնագետ եւ այդ ցուցանիշով աշխարհում գրավում է 4-րդ տեղը (առաջին տեղում է ԱՄՆ-ը՝ 1,3 մլն մասնագետ, հետո Չինաստանը՝ 743 հազար եւ ճաղոնիան՝ 648 հազար): Այսինքն՝ Ոուսաստանը, եւ համարատասխանաբար ԱՊՀ Երկրները դեռևս ունեն մարդկային մեծ ներուժ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում: Այս եւ այլ բնույթի ցուցանիշների համատեսում է, որ ներկայումս ռուսաստանյան մի շարք, մասնավորապես ԱՊՆ համակարգում գործող, վերլուծաբաններ գտնում են, որ եթե Ոուսաստանը որակադիմ չփոխի իր մոտեցումները գիտատեխնիկական ոլորտի նկատմամբ, աղա այդ Երկիրը համաշխարհային տնտեսությունում շարունակաբար կունենա Երկրորդական դերակատարում:

## **Նոր մոտեցումներ**

Ակնհայս է, որ Ռուսաստանի սնտեսության ռազմավարության փոփոխումը հնարավոր է միայն այդ երկրի ընտրանու կողմից գիտատեխնիկական զարգացման հիմնախնդրի լիարժեք ընկալման արդյունքում եւ այդ ուղղությանը ռազմավարություն իրագործելու ունակ ֆաղաբական, կազմակերպական եւ սնտեսական ուժի առկայության դարագայում: Վերջինիս առիթով նկատենք, որ խորհրդային տարրերից մնացած ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՅ-Թեկն) կարերը միշտ չեն, որ ունակ են արդյունավետ գործելու իրենց համար նոր դայմաններում:

Այս համատեսում տեղին է թերեւս վերիիցել, որ Վլադիմիր Պուտինը ԿԳԲ-ում աշխատելու տարիներին մասնագիտացել է գիտատեխնիկական հետախուզության բնագավառում, այսինքն՝ այդ ոլորտի խնդիրները նրան չեն կարող խորթ լինել: Իր հերթին վերլուծելով Պետական դումայի վերջին ընտրություններին մասնակցած ֆաղաբական ուժերի ծրագրերը եւ հայտարարությունները՝ կարելի է հստակ դնել, որ գիտատեխնիկական զարգացման անհրաժեշտության եւ հրատարակության իրական զգացումը բնորոշ էր միայն «Ռոդինա» բլոկին: Մասնավորաբես այդ բլոկի ծրագիրը ենթադրում է վառելիքաներգետիկ համալիրից (ՎԵՌ-Զնիս) ստացված գերեահույթների հարկման նոր մեխանիզմ: Ստացված գումարների կեսը ողեք է ուղղվի սոցիալական, մնացյալը՝ նոր տեխնոլոգիաներ զարգացնելու ոլորտ: Դամաձայն Գլազելի ոլիառի՝ «1կգ իննարդիոը արժե մի բանի հազար դոլար, իսկ 1կգ նավթը՝ մի բանի ցենս»: Նկատենք նաեւ, որ նման մոտեցումը

արտահայտում է «կոմունալիզմ» Զնիս-ի եւ «հայրենասիրական» Թկիս-ի մրցակցությունը:

Հանրահայք փաստ նաեւ այն, որ այդ բլոկը օգտվում է Պուտինի վարչակազմի համակրանքից եւ աջակցությունից: Մասնավորապես Ռուսաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Դմիտրի Կոզակը հանրիսանում է ՎԵՆ-ի ստացած գերահույթների գերհարկման ջատագովներից: Տեղեկաժամկան դաշտում առկա են նաեւ որոշ վարկածներ եւ կանխատեսումներ, համաձայն որոնց հենց «Ռոդինա» բլոկի երիտասարդ ղեկավարներին է Պուտինը աղագայում ցանկանում փոխանցել իշխանությունը, կամ, որ Սերգեյ Գլազեն է լինելու այն անձնավորությունը, որը կարող է գլխավորել ընտրություններից հետո ձեւավորվող Ռուսաստանի նոր կառավարությունը: Նկատենք, որ անկախ այս ամենի հավաստիության ասիճանից, նման տեղեկաժամկան արտանետումների առկայությունն արդեն վկայում է այն մասին, որ «Ռոդինա» բլոկի նոր սնտեսական մուտքումները ընդունելի են դարձել ռուսական բաղաբական ընտրանու կողմից: Իր հերթին դա նշանակում է, որ կարելի է սղասել նաեւ գործնական բայլեր «գիտար» սնտեսության զարգացման ուղղությամբ:

## ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ **Դավիթ Հովհաննիսյան**

Նոր տարին սկսվեց մեր տարածաշրջանի համար կարելուագույն նշանակություն ունեցող մի իրադարձությամբ: Վրաստանում կայացած նախազահական ընտրություններում բացարձակ առավելությամբ հաղթեց «վարդերի հեղափոխության» առաջնորդ Միխայիլ Սահակաչվիլիհն: Այն գործընթացները, որոնք հնարավոր դարձրին մեր հարեւան երկրի նախկին նախազահ էդուարդ Շեւարդնաձերին իշխանությունից հեռացնելը եւ Սահակաչվիլու հաղթանակը, ունեն ընդհանրական բնույթ եւ չափազանց կարեւոր են տարածաշրջանային հետագա հնարավոր զարգացումները բննարկելու տեսանկյունից:

Ակնհայտ է, որ տեղի ունեցածը սերտեն կալված է համաշխարհային բաղաբանության մեջ վերջին տարիների ընթացքում տեղ գտած գործընթացների հետ: Այն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն ռուս-ամերիկյան հարաբերությունների, այլ նաև ամերիկյան նոր բաղաբանական ռազմավարության տեսանկյունից: Միացյալ Նահանգների բաղաբան հայեցակարգը, ըստ որի նախատեսվում է այս գերմետության՝ որդես միակ համաշխարհային բեւեռի, վերահսկողության հաստատումը գլոբալ բնույթ ունեցող ենթակառուցվածքների վրա, լինեն դրանք կոմունիկացիոն, հոլմֆային թե ֆինանսական, ընդգծում է նաև երեք կարելուագույն նորատակ: ա) ժողովրդավարական արժեքների եւ ազատության համակարգի արմատավորում ամբողջ աշխարհում, բ) Միացյալ Նահանգներին ստառնացող

վտանգների լոկալացում եւ կանխում, ինչն ընդգրկում է հակասահարեկչական դայլարը, զանգվածային ոչնչացման գեներերի տարածման հնարավորությունների բացառումը, ոոր իմիգրացիոն բաղաբանությունը եւ այլն, գ) Միացյալ Նահանգների համաշխարհային գերակայությանն ուղղված մարտահրավերների կանխարգելումը: Այս վերջին դրույթի տեսակետից ակնհայս են այն դասերը, որոնք նախազահ Բուօնի վարչակազմը բաղեց իրավյան դատերազմի կաղապարագությանը մյուս մեծ տերությունների դիրքորոշումներից:

Ամերիկյան բաղաբանությունը նախագծող գործիչները հստակորեն գիտակցեցին, որ Միացյալ Նահանգների՝ որոշես միակ բնւեռ հանդես գալը եւ հաստավելը «մնացած աշխարհի» համար բոլորովին էլ անվիճելի կամ անխուսափելի իրողություն չէ եւ որ թե՛ Ռուսաստանի, թե՛ Չինաստանի համար կան այլընտրաններ, որոնցից մեկն է, օրինակ, Վերափոխված եւ բարենորդված ՄԱԿ-ի դերի եւ ազդեցության բարձրացումը ինչուս համաշխարհային բաղաբանության կոորդինացման, այնուս էլ կոնֆլիկտների լուծման հարցերում:

Միաժամանակ, իրավյան դատերազմի կաղապարագությանը մեծ տերությունների ցուցադրած դիմադրությունը դրդեց Միացյալ Նահանգներին ավելի կուս բաղաբան գիծ իրականացնել նրանց նկատմամբ: Այդ կուս գծի դրսեւորումներից մեկն էլ վրաստանյան իրադարձություններն էին, որոնց հետեւանքով Ռուսաստանը գործնականում դուրս մղվեց այս հարավկովկասյան դետությունից՝ իր ազդեցությունը դահդանելով իրենց անկախ հռչակած

Հարավային Օսերիայում եւ Արխագիայում, ինչողես նաեւ Վրաստանի կազմում անվանադես մնացող Աջարիայում:

Քետարքիր է եւ հատկանշական, որ վրացական «վարդերի հեղափոխությունը» տեղի ունեցավ հենց այն ժամանակ, երբ Ռուսաստանը փորձում է նորից իրեն վերադարձնել համաշխարհային նշանակություն ունեցող դետուրյան կարգավիճակ եւ իրականացնել «մեծ տերությանը» համադաշանող բաղաբականություն:

\* \* \*

Ռուսաստանի դիրքորոշումը իրաֆի ռուրջ զարգացող իրադարձությունների վերաբերյալ, որը սկզբնական շրջանում, աներիկյան փորձագետների եւ բաղաբական գործիչների տեսակետից՝ ուներ ոչ թե սկզբունքային հիմքեր, այլ հետապնդում էր միայն այս կամ այն չափի սակարկման նորագույն ասիդանտարար սկսեց լրջորեն մտահոգել նախագահ Բուտի վաշչակազմին: Մեկ այլ մտահոգության դաստիարակության մեջ էր Ռուսաստանի դիրքորոշումը իրանի հետ միջուկային տեխնոլոգիաների ոլորտում համագործակցելու վերաբերյալ: Այդ մտահոգությունները ավելի արմատացան այն ժամանակ, երբ ռուսական դիվանագիտությունը սկսեց բարձրացնել Սիցին Ասիայից ամերիկյան ռազմական խարիսխները դայմանավորված ժամկետներում դուրս բերելու հարցը:

Կան բազմաթիվ այլ փոքր եւ մեծ խնդիրներ, որոնց առկայությունը բնական է երկու խուռա երկրների միջեւ, սակայն մինչեւ վերջին շրջանը այդ խնդիրները լուծվում էին աշխատանքային կարգով կամ էլ փոխգիշումների համակարգի ստեղծման միջոցով:

Սակայն Մոլդովայի հետ կաղված իրադարձությունները, դուրս բնական ամերիկյան արդյունքները, Պրոզատանում՝

հետխորհրդային օրջանում առաջին նոր ռուսական ռազմական խարիսխի տեղադրումը եւ հատկապես դեկտեմբերին Մասսրիխտում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովի ընթացքում Ռուսաստանի, ինչողեւ ամերիկյան եւ Եվրոպական դիտորդներն են բնութագրում, «ոչ կառուցողական» դիրքորոշումը, որն արտահայտվեց վետոյի իրավունքի կրառամաճք, ստիլում են արեւմտյան բաղաբական օրջանակներին ավելի մանրամասն բնարկել Ռուսաստանի ներկա վիճակը, նրա հնարավոր աղագա զարգացումը, ինչողեւ նաեւ նախագահ Պուտինի ծրագրերը՝ երկրորդ նախագահական ժամկետի ընթացքում:

Ռուսական բաղաբականության կուսացումը դիտորդների գգալի մասը բացատրում է նախընտրական օրջանում անխուսափելի դողովով, գտնելով, որ Պուտինը ստիլված է դիմել որոշ բայերի, որոնք, իր նախընտրական գործունեությունը ծրագրող թիմի կարծիքով, թույլ կտան բարձրացնել նախագահի վարկանիշը: Այստեղ, անշուշտ, որուակի տրամաբանություն կա, սակայն անշահագրգիռ վերլուծաբանների համար հասկանալի է, որ ռուսական ներքին եւ արտաքին բաղաբականության մեջ վերջին օրջանում դրսեւորված միտումները հստակորեն բաժանվում են երկու տեսակի. այնոիսի միտումներ կամ ծրագրեր, որոնք կարելի է կանգնեցնել կամ փակել, եւ այնոիսի բաղաբական գործողություններ, որոնց հետեւանքները եւ արդյունքները երկարաժամկետ նշանակություն ունեն: Մասնավորապես, դումայի ընտրությունների արդյունքները այս տեսակետից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ վերջինիս նոր կազմը կոչված է համագործակցել Վ.Պուտինի հետ նրա ամբողջ երկրորդ նախագահական օրջանի ընթացքում: Դումայի կազմում, առաջին անգամ լինելով, գործնականորեն ներկայացված չեն արեւմտամետ

ուժերը: Փոխարենը, նոյսնողես առաջին անգամ, ի դեմք կազմակերպված եւ բավականին լուրջ հնարավորություններ ունեցող «Ռոդինա» բաղաբանական բլոկի, ներկայացված է ռուսական ազգայնական բաղաբանական ուղղությունը, որը մինչ այժմ ամորք էր կամ էլ կեղծ ներկայություն ուներ. այդ դատարկ տեղը լրացնում էր ժիրինովսկու կուսակցությունը, որը իրական գաղափարական ներուժ չունի:

«Ռոդինա» միավորում է հիմնականում ծախս դաշտի գործիչներին, սակայն նրանց մեջ կան նաև այսպես կոչված նացիոնալ-լիբերալներ: Նման միավորման ներկայությունը դումայում վկայում է այն մասին, որ Պուտինին սատարող երկրի բաղաբանական եւ սնտեսական ուժերը փորձելու են ծեւավորել այն, ինչ ռուսական մամուլում անվանվում է «ռուսական ազգային նախագիծ»: Բոլորովին դարձ չէ՝ կկարողանա՞ արդյո՞ Ա. Դուգինը, որը Ռուսաստանում հաճարվում է եվրասիականության գլխավոր գաղափարախոսը, դիմադրել աստիճանաբար ուժեղացող ռուսական ազգային գաղափարի՝ ռուս ազգի հասուկ բաղաբանակրթական առավելության գաղափարի կողմնակիցներին, թե՞ վերջիններս կկարողանան դառնալ առավել ազդեցիկ գաղափարական հոսանք վաղվա Ռուսաստանում:

Երկարաժամկետ բաղաբանական ծրագրերի բնույթ ունեն նաև Ռուսաստանի գործողությունները Կովկասում, Մոլդովայի նկատմամբ եւ Միջին Ասիայում: Դա է դասճառը, որ ռուսական վերլուծաբանների գգալի մասը չափազանց բացասական վերաբերմունք դրսեւորեց դեկտեմբերի սկզբին տեղի ունեցած ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտաքին գործերի, դաշտամության նախարարների եւ ՆԱՏՕ-ի խորհրդի հանդիդումների արդյունքում ստեղծված փաստաթղթերի նկատմամբ: Ճարցն

այն է, որ ՆԱՏՕ-ի բաձրագույն ղեկավարությունը արձանագրել է, թե աղագայում ամենավտանգահարույց տարածաշրջաններն են լինելու Մերձավոր եւ Միջին Արեւելք, Կովկասը եւ Կասպից ծովի ավազանի Երկրները, այսինքն՝ բոլոր այն տարածաշրջանները, որտեղ Ռուսաստանն ունի կենսական ժահեր, իսկ մեկում (Կովկաս)՝ իր տարածային ամբողջականությունը վասնգող հիմնահարցեր:

Ամերիկյան բաղաբական գործիչները եւ բաղաբակենները ուղղակիորեն հայտարարում են, որ Ռուսաստանի գործողությունները վերջին տարիների ընթացքում կաթածահար են արել ԵԱՀԿ գործողությունները, եւ ներկայումս այս կազմակերպության ֆունկցիաները ստիպված են իրենց վրա վերցնել Եվրոպայի խորհուրդը, Եվրամիությունը եւ ՆԱՏՕ-ն, ինչը գնահատվում է չափազանց բացասականորեն, բանի որ ԵԱՀԿ կարեւորագույն խնդիրներից է համարվում ժողովրդավարական չափանիշների արմատավորումը հետխորհրդային երկրներում, այստեղ ազատ եւ արդար ընտրությունների աղահովումը, ազատական ընտեսական համակարգի ձեւավորումը եւ այլն։ Ըստ նույնագույն գնահատականների, ռուսական բաղաբականության հետեւանդով ԵԱՀԿ գործողությունների արդյունավետությունը նախկին խորհրդային հանրադետություններում չափազանց ցածր է։

Վերջին իրադարձությունները, որոնք կարգված են Վրաստանում զարգացող գործընթացների հետ եւ որոնք առաջացրին Ռուսաստանի ոչ այնքան աղեկված արձագանքը, նույնութեա կարող են բավականին դժվար հարթվող հետեւանդներ ունենալ։ Դամենայնդեղս, հարկ է նկատի ունենալ, որ Վրաստանի վրա ճնշում իրականացնելուն ուղղված Մոսկվայի բոլոր բայլերը

ծայրահեռ բացասական գնահատականների են արժանանում ոչ միայն ԱՄՆ, այլ նաև՝ Եվրոպական կառույցների եւ առանձին առաջատար Եվրոպական ղետությունների կողմից:

Իրափի եւ Աֆղանստանի հետ կաղված խնդիրները, որոնք մինչեւ վերջերս գնահատվում էին որդես լուծվող, ներկայումս վերածում են լուրջ հիմնահարցերի: Եթե անմիջապես սեղտեմբերի 11-ից հետո Ռուսաստանը, գործընկերային սկզբունքներից ելնելով, համագործակցեց Աֆղանստանում ծավալված ռազմական գործողությունների ընթացքում, առաջ հետագայում, հատկապես այն բանից հետո, եթե որոշվեց, որ այս երկրում նախատեսված գործողություններին դեմք է մասնակցի ՆԱՏՕ-ն եւ նրա դերակատարությունը դեմք է ընդլայնվի, առաջացան բարդություններ: Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ընդլայնվող գործունեությունը նշանակում է, որ նախկին խորհրդային միջինասիական հանրապետությունների հարավից այս նորանկախ երկրների վրա ազդեցության նոր ձեւեր են կիրառվելու, ինչը նույնութես չի կարող բավարարել Մոսկվային: Իրավիճակը ՌԴ համար ավելի ժխուր է դարձնում այն փաստը, որ մի շարք ԱՄՆ-ին Իրափի հարցում հակադրված արեւածեվրոպական ղետություններ, եւ առաջին հերթին Գերմանիան, Աֆղանստանում ակտիվորեն մասնակցում են Եվրատանշյան այս կառույցի գործողություններին:

ԱՄՆ եւ Ռուսաստանի շահերի եւս մեկ բախման կետ է Աղրեջանը, որտեղ Միացյալ Նահանգները ոլանավորել է 15 հազարանոց արագ արձագանքնան ստորաբաժանումներ տեղադրել: Կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանը, որդես Բաբվի վրա միակ ազդեցության միջոց ունենալով Ղարաբաղի հիմնահարցը, նորից կծագի խանգարել Եվրատանշյան համակարգի կողմից նախաձեռնվող խաղաղ

կարգավորման գործընթացին, ինչը լրացնուցիչ սրություն կմտցնի մեր տարածաշրջանի բաղադրական խնդիրների մեջ:

\* \* \*

Վրաստանում Սահակավիլու իշխանության գալը նշանավորեց նոր բաղադրական իրողության ձեւավորում մեր տարածաշրջանում եւ ռուս-ամերիկյան հարաբերություններում:

Այս նոր իրողության մասին է խոսում ՌԴ-ում ԱՄՆ դեսպան Վերքընույի՝ Քարնեգիի իիմնադրամուն վերջերս ունեցած ելույթի ժամանակ արտահայտած հետեւյալ միտքը. «Միացյալ Նահանգները համարում են, որ մեր երկու երկրները (Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը - Դ.Յ.) կարող են ամրադրել կայունությունը Ռուսաստանի սահմանների գոտում, այդ թվում՝ Մոլդովայում, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Մեմբ ընդունում ենք, որ Ռուսաստանը այս տարածաշրջանում էական օւհեր ունի ու որ լավ հարաբերությունները Ռուսաստանի եւ նրա հարեւանների միջեւ համադրասխանում են բոլորի օւհերին: ԱՄՆ-ը նույնութեան էական օւհեր ունի այս տարածաշրջանում, որոնք չեն ունահարում Ռուսաստանի օւհերը, այլ, հուսով ենք, գործում են բոլոր կողմերի օգտին: Սակայն, դատելով փաստերից, Ռուսաստանում օւսերը օւրունակում են կարծել, որ Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի հարեւանների միջեւ օւփումների եւ համագործակցության ընդլայնումը այնորոշ խաղության է, որում, եթե մեկը հաղթում է, առաջ մյուսը անդայման դեմք է դարսվի եւ որ ամերիկյան ազդեցությունը ուղղված է Ռուսաստանի օւհերի դեմ եւ նույնիսկ՝ վտանգավոր է Ռուսաստանի անվտանգության համար»:

Իրավիճակը փոխվել է այնքան, որ ամերիկացիներն արդեն խոսում են այն մասին, թե Ռուսաստանը այն տարածաշրջանում, որը միշտ համարել է իր եւ միայն իր ազդեցության ոլորտ, «ունի էական ժահեր»։ Ընդամենը երեք ամիս առաջ Ա.Չուբայսը հայտարարեց, որ Ռուսաստանը դեմք է դառնա «ազատական կայսրություն», ինչին հետում է առաջարկ միասին կայունացնել ռուսական սահմանների գոտին։ Ակնհայտ է, որ նման իրողությունը ներկայումս ստիպում է ռուս վելուծաբաններին՝ ձգտել հասկանալ, թե որտե՞ղ են Մոսկվայի արտաքին բաղաբանության սխալները եւ ի՞նչ կարելի է անել ներկա իրավիճակը կարգավորելու համար։

Նրանք ընդգծում են հետեւյալ հիմնական սխալները.

ա) Ռուսաստանը Վրաստանում իր ժահերի իրականացման համար փորձում էր հենվել միայն Արխագիայի, Յարավային Օսեթիայի եւ Աջարիայի վրա,

բ) ռուսական դիվանագիտությունը չէր դիտարկում ամերիկացիներին՝ որպես կովկասյան տարածաշրջանում նոր ակտիվ խաղացողի։ Ինչորս նույն է Ս.Մարկեղոնովը, «Երիտրացիների» ամերիկյան հովանավորների հետ կոնսորտիվ երկխոսության հաստատման եւ «հովիվների հետ ուղղակի շփումներ հաստատելու փոխարեն, ռուսաստանյան դիվանագետները շարունակում են Վրաստանը համարել ռուսական արտաքին բաղաբան սեփականություն եւ ուժնշում են ԱՄՆ չափազանց ակտիվության կադակությամբ»։

«Ինչորիսի՞ն դեմք է լինի ՌԴ բաղաբանությունը Վրաստանի նկատմամբ» հարցին հնչում է երկու դատապահան։

1) Վրաստանի վրա ճնշում գործադրել բոլոր հնարավոր միջոցներով, օգտագործելով թե՛ անջատողական ուժերը, թե՛

էներգետիկ գործոնը եւ թե՛ հնարավոր ուժային գործողությունները, հետաձգել ռազմախարիսխների փակումը եւ այլն,

2) հաշվի առնել ամերիկյան շահեցը Կովկասում եւ այն գործոնը, որ Միացյալ Նահանգները շահագրգրված է տարածաշրջանում կայունություն հաստատելու մեջ եւ համագործակցել նրանց հետ «կրսեր գործընկերոց» կարգավիճակով: Ուստատանը Կովկասը կառավարելու հսկայական փորձ ունի, որը կարող է դրականորեն օգտագործվել ի նոյաս ընդիհանուր շահերի:

Դարկ է նշել, որ Վրաստանում գտնվող ռուսական ռազմախարիսխների հեռացման հարցը գործնականում կարելի է լուծված համարել, բանի որ Միացյալ Նահանգները առաջարկել է հատուցել այդ գործընթացի հետ կաղված գումարը, ինչին ՈԴ ԱԳ նախարար Իգոր Իվանովը դրական արձագանք է տվել, եւ հարցը կարծես միայն գումարի շուրջ սակարկությունների հետ է կաղված:

Ռազմախարիսխների դուրսբերումը Վրաստանի տարածից կնօանակի տարածաշրջանում ռուսական ռազմական ներկայության կտրուկ կրծատում, ինչն ավելի մեծ հնարավորություններ կստեղծի եվրատանտիան կառույցների ազդեցության ընդլայնման համար, լրացուցիչ գործոն կհանդիսանա ԱՄՍ ազդեցությունը ամբողջ կովկասյան տարածաշրջանում խորացնելու համար, որն ամերիկյան դիվանագիտությունը, ամենայն հավանականությամբ, կօգտագործի նախեւառաջ Վրաստանի եւ նրանից առանձնացած տարածների միջեւ ծագած կոնֆլիկտները լուծելու համար: Դավանաբար, հենց այս դաշտում էլ հնարավոր կլինեն փոխզիջումները Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ, եթե, իհարկե, ռուսական

ղեկավարությունը չոհմի կտրուկ բայլերի՝ փորձելով հակադրվել Միացյալ Նահանգներին:

Ի մի բերելով այս ամենը՝ կարելի է ենթադրել, որ չնայած վերջին շրջանում ռուս-ամերիկյան հարաբերությունների մեջ նկատվող լարվածության աճին, շահերի կտրուկ հակադրում տեղի չի ունենա, բանի որ կողմերը անցած տարիների ընթացքում ձեռք են բերել Շփումների եւ համագործակցության դրական լուրջ փորձ, ստեղծվել է ընդհանուր շահերի որոշակի դաշտ: Սակայն դրումայի ընտրությունների արդյունները, որի հետեւանմով նախազահ Պուտինը կունենա իր կամքին լիովին ենթակա խորհրդարան, եւ նոր «կայսերական» գաղափարական դրույթները, որոնք այս կամ այն չափով արտահայտվում են ռուսական իշխանամետ կուսակցությունների եւ կազմակերպությունների կողմից, թույլ չեն տալիս զնահատել ռուս-ամերիկյան հարաբերությունները՝ որպես դրական զարգացման ներուժ ունեցող:

Բոլոր դեմքերում, իրավիճակը մեր տարածաշրջանում լարվել է, ինչը չի կարող չանդրադառնալ Հայաստանի ներքին եւ արտահին գործերի վրա:

## ԻՐԱՆԸ ԽՈՐՃՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Սեւակ Սարուխանյան

Իրանի հպատական Համբարձության արտաքին եւ ներքին բաղադրականության հիմնական ուղղությունների ծեսավորման եւ իրականացման գործում կարեւորագույն դեր է խաղում երկրի ներտում ծավալված դայլարը այստես կոչված ռեֆորմատորների եւ դահդանողականների միջեւ։ Առաջինների գործումներությունը հիմնականում կատվում է 1997-ին երկրի նախագահ ընտրված Ա.Խաթամիի, երկրորդներինը՝ Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեիի անվան հետ։ 2000 թվականի խորհրդարանական ընտրություններում վճռական հաղթանակ տարան ռեֆորմատորները, ինչը 1997-ի Խաթամիի հաղթանակից հետո երկրորդ լուրջ հարվածն էր իսլամիս-դահդանողականների դիրքերին։

Դենց 2000-ից դահդանողականները սկսեցին ավելի լուրջ վերաբերվել իրենց իշխանության դահդանամը եւ ամրադրմանը, ինչի արդյունքը դարձավ 2003-ի փետրվարին մունիցիպալ ընտրություններում նրանց տարած վճռական հաղթանակը։ Ռեֆորմատորներ-դահդանողականներ մրցակցության գագաթնակետերից են լինելու այս տարվա փետրվարի 20-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները, որոնք անցնում են ավելի համ լարված մթնոլորտում։

Ժամանակակից Իրանի կառավարման համակարգում, քանակում, հատուկ ծառայություններում վճռորոշ ազդեցություն եւ մասնակցություն ունեն դահլյանողականները, որոնց դերը երկրի կառավարման մեջ դայմանավորված է ոչ այնքան ժողովրդի աջակցությամբ, որը վերջին տարիների ընտրություններին մեծ մասամբ դաշտանել է բարեփոխումների կողմնակիցներին, որքան երկրի հոգեւոր իշխանության ազդեցությամբ:

Իրանի նախագահ Մ.Խաքամին 1997 թվականի իր հաղթանակով դարձական էր ժողովրդի ընտրությանը, որը դայմանավորված էր երկրի հասարակական կյանքի լճացման դեմ ունեցած նրա դժգոհությամբ: Սակայն իր նախագահության անցած տարիների ընթացքում Խաթամին այդուհես էլ չկարողացավ իրականացնել իր բարեփոխումների ծրագիրը, ինչը մեծ մասամբ դայմանավորված էր դահլյանողականների հակազդեցությամբ, որոնք զբաղեցնում են կարեւորագույն դաշտներ երկրի կառավարման համակարգում եւ քանակում:

2003 թվականի կեսերի ողջ ընթացքում իրանցի դահլյանողականների ելույթները լի էին վստահությամբ, որ 2004-ի փետրվարյան խորհրդարանական ընտրությունները, ի տարբերություն 2000-ի, կավարտվեն իրենց հաղթանակով: Դարկ է նշել, որ նման տեսակետ ունենալու համար դահլյանողականներն ունեին գրեթե բոլոր հիմքերը, մանավանդ տարեսկզբին (2003-ի փետրվարին) տեղի ունեցած մունիցիդալ ընտրություններից հետո, որում նրանք վճռական հաղթանակ տարան: Ոեփորմատորների դարձությունը անգամ համեմատելի չէր կարելի համարել, քանզի մի շարք բաղադրների մունիցիդալ խորհուրդներում նրանք զրկվեցին որեւէ մասնակցությունից: Նման բաղադրների շարքում էր

նաեւ ավանդաբար դեմոկրատական կարգախոսներ դաշտամոնող մայրաքաղաք Թեհրանը:

Իրանական ռեֆորմատորները իրենց դարտությունը մեծ մասամբ դայմանավորեցին ընտրություններին բնակչության ցածր մասնակցությամբ: Իրոք, 2003-ի մունիցիպալ ընտրություններին հաճախեցին բավականին ժիշ ընտրողներ (ընդհանուր առմանը ընտրողների 10-15 տոկոսը): Սա իրանի համար շատ ցածր ցուցանիշ էր՝ հասվի առնելով, որ վեցին երկու նախագահական ընտրություններին մասնակցել էին բնակչությունից 70-80 տոկոսը:

2003-ի մունիցիպալ ընտրություններին ամենից ժիշ մասնակցություն ունեցան նրանք, ովքեր 1997-ին եւ 2001-ին դաշտամոններ էին խաթամին, այսինքն՝ ռեֆորմատորներին: Մրանք հիմնականուն բաղադրյան բնակչություն են, ովքեր, ի տարբերություն իրանցի զյուղաբնակների, միշտ էլ ընտրել են համեմատաբար դեմոկրատական արժեքներ քարոզող բաղադրյան ուժերի: Քաղաքային բնակչության այսպիսի ցածր մասնակցությունը ընտրություններին մի շաբաթ վերլուծաբանների կածինով ոչ այլ ինչ է, եթե ոչ դժգոհություն խաթամին բարեփոխումներից, ավելի ճիշտ դրանց դանդաղ ընթացքից:

Իրանի բանկչությունը, որի 70 տոկոսը կազմում են երիտասարդները (մինչեւ 30 տարեկան), այլեւս չի վսահում խաթամին, լուրջ բարեփոխումներ իրականացնելու նրա վճռորոշությանը:

Իհարկե, խաթամին նախկինում դաշտամած ուժերը 2004-ի ընտրություններին չեն բվեարկի դահլյանդականների օգտին: Մրանց մեծ մասը կարող է դարձադես չմասնակցել փետրվարյան ընտրություններին, ինչը համադատասխանաբար կավելացնի դահլյանդականների աջակիցների թիվը: Ռեֆորմատորներն

այս իրավիճակի ողջ բարդությունը հասկանում են, եւ հավանաբար դա է դասձառը, որ նրանց աջակցող անհամենաս սակավաթիվ լրատվամիջոցները ողջ 2003 թվականի երկրորդ կեսին ժողովրդին բարզում էին ավելի գործուն մասնակցություն ունենալ ընտրություններին: Նման բարզացավ են անցկացնում նաեւ դահլյանողականները, սակայն այն ուղղելով ավելի շատ դեղի գյուղական շրջաններ:

Իրանի հոգեւոր առաջնորդ Խամենեին նույնութեան բարզում է ժողովրդին ավելի ակտիվ մասնակցություն ունենալ ընտրություններին, բանգի դրանցից է կախված, թե որքանով լեզիտիմ կլինի իսլամական հանրապետության օրենսդիր մարմինը. «Եթե բնակչության մեծ մասը գա ընտրություններին, աղա մեր ընտրված իշխանությունները անվիճելիորեն կիամարվեն լեզիտիմ, ինչը կսիրոի Արեւությին հասվի նստել Իրանի իսլամական ռեժիմի հետ»: Չափավոր դահլյանողական «Ինտիհար» թերթի գլխավոր խմբագիր Թ. Խաչեմին իր հոդվածներից մեկում գրում է. «Եթե աշխարհը գործ ունի մի երկի հետ, որտեղ խորհրդարանական ընտրությունները չեն վայելում բնակչության մեծամասնության աջակցությունը, աղա աշխարհը կանի ամեն ինչ, որտեսագի որեւէ գործ չունենա այդուհիսի երկի հետ»:

Ուժորմատունների վարկը երիտասարդության շրջանում նվազեցնելու համար դահլյանողականները անցած տարիների ընթացքում առաջ են բաւել այն տեսակետը, որ բարեփոխումներ խոսացող բաղաբական ուժեցր դարձադես բաղաբականադես ևկար են եւ չեն կարող իրական աջակցություն ցուցաբերել ազատականացման ձգտող երիտասարդությանը: Որու վեցլուծաբաններ էլ դնդում են, որ 2002-2003-ի ուսանողական

անհանգստությունները՝ կառված դեմոկրատական արժեքներ կրող որոշ դասախոսների համալսարաններից հեռացման հետ, իրահրված են եղել դահլյանողականների կողմից միայն մեկ նորատակով. աղացուցել, որ Խաթամին ի վիճակի չէ որեւէ կերպ արգելակել երկրի հոգեւոր իշխանությունների իրահանգները:

Դաշվի նստելով մունիցիպալ ընտրությունների դասերի հետ՝ ռեֆորմատորները այս ընտրություններին ուժեղացրել են իրենց աշխատանքները երիտասարդության եւ ուսանողության հետ՝ կոչ անելով նրանց էլ ավելի մտահոգվել երկրի աղագայով։ Մրահոգության համար իրական դաշտաներ իրեն որ կան։ 2003-ի մունիցիպալ ընտրությունների արդյունքում Թեհրանում գրեթե ողջ իշխանական լծակները վերցրած դահլյանողականները անցած տարի իրենց վարած բաղաքականությամբ արդեն իսկ ցույց սկեցին, թե ինչորիսի հետեւանքներ կարող է ունենալ իրենց միիշխանությունը երկրի հետագա զարգացման վրա։ Այսպես, Թեհրանի դահլյանողական բաղաքաղետը անցած տարի հանդես եկավ դաշտոնական առաջարկությամբ (որը կարելի է համարել նաև որդես մտադրություն)՝ փակել մայրաքաղաքի բոլոր մօւկության կենտրոնները՝ դրանց տեղում կազմակերպելով «Դուրանի ժողովրդական ընթերցման սրահներ»։

2003-ի կեսերին իրանի Խալամական Դանրապետության նախագահ Ս.Խաթամին Մեջլիսի բարեփոխումների կողմնակից դատարանավորների հետ իր հանդիլումների ժամանակ մի քանի անգամ խոստացավ դաշտոնադես դաշտանել ռեֆորմատորների ընդհանուր նախընտրական ցուցակը։ Սակայն անգամ երկրի նախագահի դաշտոնական աջակցությունը չի դաշտանում բարեփոխումների կողմնակիցներին դահլյանողականների

կողմից կազմակերպված անախորժություններից: Այսուես, «Մուշարտելյաք» բարեփոխումների կուսակցության նախագահ, Իրանի նախագահի եղբայր Ս. Ռ. Խաթամին նույն է. «Մենք գիտենք, որ մեր խորհրդակցությունների սենյակները ձայնալսվում է եւ որ մեր կուսակիցներին հետաղնդրում են: Այս դայմաններում մենք չենք օտարում բաց խոսել մեր աղաքա՞ ծրագրերի մասին»: Այս ընտրություններին ռեֆորմատորները իրոք որ զգալիորեն ուժ հրապարակեցին իրենց նախընտրական ծրագիրը: Սա մեծ մասամբ դայմանավորված էր նրանով, որ իրանական լրատվամիջոցների մեջ մասը վերահսկվում են դահլյանողականների կողմից, ինչը ուղղակիորեն մեծացնում է ծրագրային հակաֆարոզչության ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա:

Ինչ վերաբերում է դահլյանողականների նախընտրական ռազմավարությանը, աղաքա՞ այս ընտրություններին նրանց դատարկանավորական ցուցակում առաջին անգամ շատ մեծ թվով տեղ են գտնել բանակի եւ հատուկ ծառայությունների բարձրաստիճան սղանների անուններ: Նման ճանաղարհով դահլյանողականները ջանում են ստանալ զինված ուժերի աջակցությունը ընտրությունների ժամանակ:

Միջազգային հանրությանը, եւ առաջին հերթին Միացյալ Նահանգներին, Իրանի խորհրդարանական ընտրությունները հաևկաղես հուզում են (այսուես, համենայնդեմս, հայտարարվում է դաշտում աղեստելու) Իրանի միջուկային ծրագրի հետագա զարգացման հեռանկարների տեսակետից: Իրականում այս կամ այն ուժի հաղթանակը ընտրություններում կարող է լուրջ ազդեցություն ունենալ միջուկային ծրագրի հետագա ընթացքի վրա: Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին իրանական հասարակության մեջ

ակտիվութեան բնարկվում է միջուկային գեներ բերելու հարցը, որի հիմնական ջատագովները դահլյանողականներն են. նրանք դրանում տեսնում են երկրի անվանգության դահլյանան հիմնական միջոցը: Պահպանողականների հաղթանակը ընտրություններում կարող է լուրջ հետեւանքներ ունենալ միջուկային ծրագրի զարգացման վրա՝ հաղորդելով դրան ավելի շատ ռազմական բնույթ:

Դոդվածի սկզբում նշվեց, որ դահլյանողականները այս ընտրություններին մոտեցան ավելի բան ինքնավսահ: Սակայն հետագա զարգացումները ցույց տվեցին, որ ամեն ինչ այնքան էլ հարթ չի ընթանում, եթե ռեֆորմատորների դերն ու հեղինակությունը գնալով մեծանում են: Սա իր հերթին սիդրեց խամենեիի կողմնակիցներին ավելի ավտորիսար ճանաղարհով լուծել իրենց խնդիրները, ինչի բարձրակետը դարձավ 2004-ի հունվարի սկզբի որոշումը՝ 80 ազդեցիկ ռեֆորմատորների վերջնականացես զրկել ընտրություններին մասնակցելու իրավունքից, որոնց շարքում է նաև Իրանի նախագահի եղբայր Մոհամադ Ռեզա Խաթամին: Անառարկելիորեն ավտորիսար այս որոշումը բարձրացրեց դժգոհության մեջ ալիք: Իրանի նախագահ Խաթամին անգամ լրատվամիջոցների առաջ չթացրեց իր զայրույթը: Այս փաստը միանշանակ բացասական արձագանք ստացավ արտասահմանում:

Պարզ է դարձել, որ Խաթամիին աջակցող ռեֆորմատորների թեւք գնալով զիջում է առանց այդ էլ ոչ այնքան ամուր դիրքերը դահլյանողականներին, ինչն ավելի բան անհանգստացնում է Միացյալ Նահանգներին, որոնք ի դեմս Խաթամիի տեսնում են այն անձնավորությանը, որը կարող է ուղղել Իրանին դեղի հարաբերությունների լավացում ԱՄՆ հետ: Խ. Սոլանան իր հերթին հայտարարեց,

որ Եվրամիությունը անհանգստացած է 80 ռեֆորմատորներին ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկելու փաստով, սակայն միեւնույն ժամանակ նշեց, որ Եվրամիությունը չի խառնվելու Իրանի ներքին գործերին:

Առաջիկա խորհրդարանական ընտրություններն անհանգստացնում են նաև Ռուսաստանին, որի նավթային եւ գազային ընկերությունները վերջին մի քանի տարիներին ակտիվացրել են իրենց բայլերը Իրանում՝ ներդրումներ կատարելու հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Ազատական թերի դարտության դեմքում կարող է դժվարանալ արտասահմանյան ընկերությունների նույնը Իրանի նավթային եւ գազային սննդեսություն:

Ինչեւ, 2004-ի խորհրդարանական ընտրություններն այսօր գտնվում են միջազգային բաղադրականության ուժադրության կենտրոնում:

Յասկանալի է, որ Իրանում սույսավում են լուրջ փոփոխություններ, ու թերեւս նոր խորհրդարանում բարեփոխումների կողմնակիցների բանակը նվազելու է: Սակայն, ինչողևս էլ հետազոտում գարզանան գործերն Իրանում, դարձ է մեկ բան՝ ներքին այս խմնորումները բացասական ազդեցություն կթողնեն հասարակության միասնության վրա, ինչն արտաքին ազթեսիայի վաճագի առաջ կանգնած երկրի համար կարող է կործանարար լինել: Ինչ վերաբերում է հայ-իրանական հարաբերություններին, աղա դրանց առաջմն լուրջ վտանգ չի ստանում, բանգի թե՛ դահլյանողականները եւ թե՛ ռեֆորմատորները ավանդաբար եղել են Յայաստան-Իրան հարաբերությունների բնականոն գարզացման կողմնակիցներ:

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԿԻՊՐՈՍՅԱՆ ՀԱՐՑԻՆ *Մարգիս Հարությունյան*

Կիրոսի հարցը Անկարայի արտաքին բաղադրական կարեւոր բաղկացուցիչներից մեկն է: Տարբեր ժամանակաշրջաններում կղզու հարցը տարբեր աստիճանի նշանակություն է ունեցել Թուրքիայի համար, սակայն, եթե 1999թ. այդ երկիրը հրչակվեց Եվրամիության (ԵՄ) անդամության թեկնածու, իսկ Անկարայի արեւմտյան ռազմավարության մեջ ինտեգրացիան դեռի ԵՄ դարձավ առաջնային, Կիրոսի հարցը միանգամից ծեռյա բերեց էական կարգավիճակ:

Գաղափարախոսական առունով կիրոսյան հարցի ուրաց թուրքական վերնախավի ներսում բախվում են երկու հայեցակարգային մոտեցումներ՝ դա «Ստամբուլի Թուրքիան» է և «Անկարայի Թուրքիան»: Թեեւ այս երկվությունը շատ հաճախ օգտագործվում է արտաքին բաղադրական մանեւրների համար, սակայն իր հիմքում ունի համակարգային իմաստ եւ առնչվում է թուրքական դեսության հետագա զարգացման գաղափարա-փիլիսոփայական կողմին:

Կիրոսյան հարցի այս վեցին ակտիվացման սկիզբը մոտ մեկ տարի առաջ էր: Գործընթացի ակտիվացման հիմնական ազդակը եկավ ԱՄՆ եւ նրա դաշնակիցների բաղադրականությունից: առջեւում իրաֆի դատերազմն էր, եւ առկա էր «Միացյալ Եվրոպայի» նկատմամբ ամերիկյան նոր բաղադրականությունը: Իրենց դերը խաղացին Յունաստանի ու Թուրքիայի մոտեցումները, անուղղակի ազդեցություն ունեցավ նաեւ ԵՄ ընդհանուր մոտեցումը՝ կարգավորված

տեսնել իր անդամ ողեալությունների հետ կաղաքած հակամարտությունները: Ակտիվացման այդ փուլը իր դադարը ստացավ 2003թ. մարտին, երբ Հաագայում կողմերը այդուս էլ չեկան համաձայնության:

Համաձայն 2002թ. դեկտեմբերին Կողենիազենում կայացած ԵՄ գագաթաժողովի որոշումների, գերազանցած Արեւելյան Եվրոպայի 10 երկրներ (Լեհաստան, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Մալթա եւ Կիպրոս՝ հանձինս նրա հունական հատվածի) որու է 2004թ. մայիսի 1-ի դրությամբ արդեն իսկ մաս կազմեն «Միացյալ Եվրոպային»: Եվրոպական Միության դիրքորոշումը հետեւյալն է. եթե թուրքական կողմը (առաջին հերթին դաշտում գտնված Անկարան) չգործադրի անհրաժեշտ ջաները եւ մայիսի 1-ին Եվրամիությանը, փաստուեն, անդամակցի կղզու միայն հունական հատվածը՝ ճանաչված միջազգային հանրության կողմից, առա սույն թվականի դեկտեմբերին թվագրված՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցի բնարկումը կարող է տաղալվել:

Կիպրոսի հարցում Եվրոպական բաղադրականության նղատակն է կղզու հունական հատվածի միջոցով չներփակվել հակամարտության մեջ: ԵՄ հիմնական թուլություններից մեկը բաղադրական (աշխարհաբանական) որոշումների ընդունման միասնական կենտրոնի բացակայությունն է: Այդ դարագայում ցանկացած հակամարտություն, որի մեջ կներփակվի «Միացյալ Եվրոպան», կարող է համակարգային ճգնաժամ առաջացնել Եվրոպական լուսավորիչների նախանշած կառույցում:

Թուրքիայի համար այս տարին սկսվեց կիպրոսյան հարցով: Անկասկած է, որ մինչեւ մայիսի 1-ը (որու

առումներով նաեւ դրանից հետո) Թուրքիայի արտաքին բաղաքական գերատեսչության ջանիքի մի զգալի նասը կենտրոնանալու է կղզու հակամարտության կարգավորման ուղղությամբ։ Բանակցությունների սեղանին կրկին Քոֆի Անանի ծրագիրն է, որի շուրջ էլ դեմք է ընթանան գործընթացները։

Ցունվարի 15-16-ը Թուրքիա իր դատմական այցը կատարեց Եվրամիության հանձնաժողովի նախագահ Ռուսան Պրոդին (ԵՄ հանձնաժողովի նախագահը շուրջ չորս տասնամյակ չէր այցելել Թուրքիա): Պատվիրակությունը, որի կազմում էր ԵՄ ընդարձակման հարցերով հանձնակատար Գյուլսեր Վերհովքենը, ուներ հայտարարագրված մեկ նորատակ՝ ստուգել Թուրքիայի դատաստվածությունը դեկտեմբերյան (2004թ.) բննարկումներին եւ ընդհանրադես՝ ԵՄ-ին անդամակցության առումով։

Բացի դատունական հանդիդումներից, Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ելույթ ունենալուց եւ Սամբուլում ԵՄ տեղեկատվական կենտրոնի բացումից, Պրոդին երեք հիմնական հաղորդագրություն սկեց թուրքական վերնախավին։ Հիմնազուրկ է այն տեսակետը, ըստ որի ոչ քիսունյա երկրները չեն կարող անդամակցել ԵՄ-ին, բարեփոխումները Թուրքիայում ընթանում են ճիշտ ուղղությամբ, սակայն մտահոգություն է առաջացնում նրանց արագությունը։ Թերեւս այդ երկու կետերը առնչվում են ավելի շատ տեսական հարթությանը, բանի որ առկա են իրողություններ, որոնք չեն կարող լուծվել անձերի մակարդակով։

Պրոդի-Վերհովքեն գույգի այցի հիմնական նորատակը Կիդրոսն էր։ «Արդեն վաղուց եկել է ժամանակը վերջ տալու Կիդրոսի եւ նրա նայրաքաղաքի բաժանմանը», Անկարայում հայտարարեց ԵՄ հանձնաժողովի նախագահը։ Ողջ այցի

ընթացքում ենթատեսուվ գնում էր այն միտքը, որ ներկայում  
Կիդրոսի հարցը չափից դուրս կարեւոր է Եվրամիության  
համար եւ այդ խնդրում դաշտունական Անկարայի  
դիրքորոշումից է մեծաղես կախված դեկտեմբերյան  
բնարկումների արդյունքից:

Մինչ Պրոդի այցը Թուրքիա, Բյուլուսել՝ Եվրամիության  
մայրաքաղաք այցելեց ԱՄՍ Պետեղարտամենտի Կիդրոսի  
հարցով հատուկ բանագնաց Թոմաս Ուեսթոնը: Վերջինս  
հանդիպումներ ունեցավ Եվրոպական խորհրդարանի  
նախագահ Փաթ Քոփի, Գյումսեր Վերհոֆենի եւ ԵՄ  
հանձնաժողովի արտաքին գործերի հանձնակատար Քրիս  
Պաստենի հետ: Այսի նոյատակը, ամենայն  
հավանականությամբ, զաների կողորդինացումն էր:

Կիդրոսյան հարցի կարգավորման գործում ամերիկյան  
բաղաքանությունը ուրվագծվում է մի բանի  
մակարդակներով: Ռազմավարական առումով այն  
ենթակվում է նոր փիլիսոփայությանը, որ ներկայումս  
գերիշում է Վաշինգտոնում: Pax Americana-ի  
տեսանկյունից Միացյալ Նահանգները դեմք է կարգավորի  
նոր աշխարհակարգին խոչընդոտող հակամարտությունները: Մարտավարական առումով ԱՄՍ նոյատակն է ուժեղացնել իր  
ազդեցությունը Յարավային եւ Յարավաեւլյան Եվրոպա-  
յուն (Եվրոպա-Մերձավոր Արեւելք կաղող օղակ),  
օժանդակել Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին, որը,  
բացի Եվրոպական աշխարհաքաղաքական դաշտի հետ  
կաղված հաշվարկներից, ունի Թուրքիայի ներսում  
Արեւմուսի համար ընդունելի համակարգի գոյության  
աղահովումը (նոյատակ, որը հետադարձում է նաև  
Եվրամիությունը):

Ակնկալվում է, որ արդեն մայիսին (2004թ.) ԱՄՍ  
նախագահ Զորջ Բոււը եւ դեժբարտուղար Քոլին Փաուելը

անձնաղես կօնքրավվեն կիդրոյան հարցի խաղաղ կարգավորման գործընթացին՝ հիմքում ունենալով Քոֆի Անանի ծրագիրը:

Հունվարի 8-ին Բուշը նամակ-ուղերձներով դիմեց Թուրքիայի, Հունաստանի եւ Կիդրոսի (հունական հատվածի) առաջնորդներին: Ուժեկի Թայիփ Էրդողանին հասցեագրված նամակում ԱՄՆ նախագահը գրում է. «Մինչեւ մայիսի 1-ը (2004թ.) ԵՄ-ին Կիդրոսի անդամակցությունը, մենք հնարավորություն ունենք հասնելու համաձայնության, ինչը բխում է թե՛ Թուրքիայի, թե՛ Միացյալ Նահանգների ռազմավարական շահերից... Բոլոր կողմերը դեմք է անհաղաղ վերադառնան բանակցությունների սեղանի ժուրց եւ Կիդրոսի խնդրի կարգավորման ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի առաջարկած ծրագրին հավատարիմ՝ ի մի բերեն իրենց բնարկումները»:

Հունվարի 25-ին, սվեյցարական Դավոսում Քոֆի Անանի հետ հանդիդումից հետո, սկսվում է Թուրքիայի վարչադես Էրդողանի դաշտոնական այցը Միացյալ Նահանգներ: Հունվարի 28-ին Սովորակ տանը կայանալու է Բուշ-Էրդողան հանդիդումը, որը վերլուծաբանների կարծիքով էական նշանակություն է ունենալու թուրք-ամերիկյան հարաբերությունների հետագա զարգացումների համար՝ ներառելով նաև Կիդրոսի հարցը:

Կիդրոսյան հարցի նոր ակտիվացումը հատկադես իրարանցում առաջարեց Թուրքիայի ներքաղաքական կյանքում: Մեր կարծիքով, այս դարագայում հարցը Ստամբուլի կամ Անկարայի «թուրքիաները» չեն, այստեղ, թերեւս, մենք գործ ունենք քաղաքական (հատկադես՝ արտաքին քաղաքական) մանեւրների հետ: Կրկին շրջանառության մեջ դրվեց կառավարություն-քանակ հակասությունների մասին տեղեկությունը (կառավա-

րությունը կողմ է Անանի ծրագրին, բանակը՝ ոչ): Քննարկվող հիմնական հարցը դարձավ կառավարության հրահանգով Թուրքիայի արտգործնախարարության կողմից դաշտասված փաթեթը, որտեղ ներկայացված են այն փոփոխությունները, որոնք ցանկանում է տեսնել դաշտուական Անկարան Կիղրոսի խնդրի կարգավորման ՄԱԿ-ի ծրագրում: Այդ կառավագությամբ նույն հունվարի 8-ին «Չանկայա» նախագահական դալարում նախագահ Ահմեդ Սեզերի, վարչապետ Էրդողանի, գլխավոր սղայակույցի ղետ, գեներալ Զիլմի Օգյոնի, արտգործնախարար Արդրուահ Գյուլի, արտգործնախարարության գլխավոր քարտուղար («մոխրագույն կարդինալ» եւ ԱԳՆ-ում բանակի մարդը համարվող) Ուղուր Զիյալի, Ազգային հետախուզական ծառայության (MIT) գլխավոր քարտուղար Սենիալ Արասադունի եւ արտգործնախարարության մի ժամկետու բարձրասիճան անձանց նամնակցությամբ կայացավ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (MGK) նիստը: Թեև ԱԳՆ փաթեթի եւ նիստի մանրամասնությունների վերաբերյալ տեղեկություններ չկան, սակայն մամուլ սղրդեցին «Չանկայայում» հունվարի 8-ին տեղի ունեցած նիստի հիմնական դրույթները: Անկարան համարում է Կիղրոսի խնդրից «ազգային հարց» (ընդգծված է այդ հարցի գերկարեւորությունը Թուրքիայի համար): Չայտարարվում է, որ թուրքական վերնախավն ունի անհրաժեշտ բաղաբական կամքը՝ «խնդրի արագ, արդար եւ կայուն կարգավորման համար՝ հիմնված կղզու իրողությունների վրա»: Նշվում է, որ թուրքական կողմի դիրքորոշման ձեւավորումը ընթանալու է Թուրքիայի հօսանական տարբեր ճյուղերի միջեւ «սերտ փոխհամաձայնությունների» միջոցով (այսինքն՝ Թուրքիայի կառավարությունը չի կարող այդ հարցում ինքնուրույն քայլեր կատարել): Թուրքիայի

ռազմաբաղադրական վերնախավը իր դիրքորոշման հստակեցման համար վերջնաժամկետ է ընտրում հունվարի 23-ը՝ MGK-ի հաջորդ նիստը: Եվ վերջադեմ, հունվարի 8-ի նիստը եւս մեկ անգամ ընդգծեց բանակցային գործընթացում այսպես կոչված Հյուսիսային Կիուրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) նախագահ Ռաուֆ Ղենֆրաշի «դեմք ու կարեւորությունը»:

Պետք է ասել, որ Կիուրոսի թուրքական հատվածի այդ անփոփոխ նախագահը բանակցություններում ավանդաբար ներկայացրել է թուրքական կողմի կույս դիրքորոշումը՝ հանդիսանալով Անկարայի «կույս խաղաղությունը»:

Անցած տարվա դեկտեմբերին ՀԿԹՀ-ում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Հիսուն տեղանոց միավական խորհրդարանի 19 տեղերը բաժին ընկան ձախակողմյան «Հանրապետական թուրքերի կուսակցությանը» (ՀԹԿ): Յոթ աթոռ ստացավ դահլիճանողական «Ժողովրդավարական (ԺՎ) կուսակցությունը»: Հունվարին ՀԹԿ առաջնորդ Թալեաթը նախագահ Ղենֆրաշին ներկայացրեց ՀԿԹՀ կառավարության կազմը: Նախարարական տասը աթոռներից վեցը անցան ՀԹԿ-ին (Վարչապետ Դարձավ Թալեաթը), իսկ չորսը՝ ԺՎ-ին (Փոխվարչապետ եւ արտգործնախարար նշանակվեց ԺՎ առաջնորդ Սերդար Ղենֆրաշը՝ նախագահ Ռաուֆ Ղենֆրաշի որդին): Անհրաժեշտ է նշել, որ այդ վերջին հանգանանքը ավելի ուժեղացրեց Ռ. Ղենֆրաշի դիրքերը բանակցային գործընթացում:

Այսդիսով, կարելի է ենթադրել, որ կիուրոսի խնդիր կարգավորումը մտել է վճռական մի փուլ: Միջազգային ժմումը զգացվում է հատկապես Անկարայի վրա, քանզի վերջինս է մերժել նույն միջազգային հանրության հավանությանը արժանացած Քոֆի Անանի ծրագիրը: Ամեն

դեղում այդ ծնօւմը իր ազդեցությունը կունենա Թուրքիայի բաղաբական համակարգի ներսում՝ լարվածության հետագա աճի տեսանկյունից: Թուրքիայի բաղաբական վերնախավի միջազգային հանդիպումները, հունվարի 8-ի Թուրքիայի MGK նիստը եւ Սամբուլում հունվարի 11-ին կայացած Ռեժեփ Էրդողան – Ռաուֆ Գևիթքաչ հանդիպումը (նմանաժիմ մի հանդիպում է ծրագրվում նաեւ հունվարի վերջին) խոսում են այն մասին, որ փաստորեն, դաշտունական Անկարան դարձել է բանակցային գործընթացի դե յուր կողմ, ինչը, ըստ էռթյան, բացակայում էր նախկինում:

Համադրելով իրողությունները՝ կարելի է ասել, որ դաշտունական Անկարայի իրական նորագույն է դեղի արեւմտյան բաղաբական-սնտեսական համակարգեր ուղղված ինտեգրացիայի հետագա խորացումը, եւ այդ առումով Կիուրոսի խնդիրը, թերեւս, դիտարկվում է իրեւ արտաքին բաղաբական մարտավարական մաներ: Այս ամենը Հայաստանի համար կարեւորվում է այն առումով, որ այդ գործընթացների որու դրվագներ կարող են կիրառվել նաեւ Հարավային Կովկասում:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Մրագս Փառայան*

«Սառը ղատերազմի» տարիներին, մասնավորապես 1970-80-ականներին, միջազգային ծեւակերպում ստացավ այսպես կոչված զարգացման իսլամական ուղղությունը, համաձայն որի՝ իսլամը կարող է հանդես գալ որպես այլընտրանֆային աշխարհակարգ եւ ի վիճակի է աղափառ մահմեդական հասարակությունների ներդաշնակ զարգացումը եւ բարօրությունը:

Զարգացման իսլամական ուղղությունների կարծիքով՝ իսլամն իր մեջ ներառում է բոլոր հիմնահարցերի լուծումները եւ, որ իսլամական ուղիով հնարավոր է հաղթահարել սոցիալ-սնտեսական հիմնախնդիրները:

Զարգացման իսլամական սեսությունների մեջ առանձնանում է իսլամական սնտեսության հայեցակարգը: Ինչպես հայտնի է, իսլամն իր մեջ ներառում է նաև իսլամական համայնքի՝ ումնայի սնտեսական կյանքին վերաբերող դրույթներ, եւ արդեն միջնադարում իսլամական իրավագիտության դասական դրույթները մշակեցին իսլամի սոցիալ-սնտեսական հայեցակարգը:

1950-ականների վերջին եւ 1960-ականների սկզբին հրատարություն ձեռք բերեց իսլամական սնտեսության ուսումնասիրությունը, որը ներառվեց իսլամական մի շարք կրթական կենտրոնների ուսումնական ծրագրերում: Իսլամական համալսարանական շրջանակներում բնարկ-

վում էր այն հարցը, թե արդյո՞ք իսլամի սնտեսական սկզբունքները կարող են համապատասխանել սնտեսության մեջ կատիտալիզմի եւ սոցիալիզմի գործելակերպին, եւ այս ուղղությամբ գգալի ուսումնասիրություններ հրատարակվեցին:

Իսլամական սնտեսական հայեցակարգում առանձնանում են մի շարժ ուղղություններ: Չնայած առկա տարբերություններին, դրանք բոլորն էլ համամիտ են այն հարցուն, որ սոցիալ-սնտեսական առաջնորդացի խնդիրները դեմք է լուծվեն մասնավոր սեփականության հիման վրա: Այդ համատեսությունը նրանց մի մասն առաջարկում է հասարակության այնորիս մոդել, որտեղ աշխատանքի եւ կատիտալի բաժնման դեմքում գործում է բանական հավասարություն: Մյուս մասը կատիտալիստական հասարակության կողմնակից է: Իսլամի սնտեսական հայեցակարգում առանձնանում է նաև իսլամական սոցիալիզմի տեսությունը, որի կողմնակիցներն առաջին հերթին դաշտանում են սոցիալական հավասարության սկզբունք՝ գտնելով, որ իսլամի եւ սոցիալիզմի միջեւ շատ ընդհանրություններ կան:

Համաձայն իսլամի՝ ամեն երկրային դասկանում է Աստծուն, ուստի սեփականատերը միայն ժամանակավորապես է սնօրինում «Աստծո ունեցվածքը»: Մահմեդական տեսարանները իսլամական սնտեսական համակարգի գլխավոր դերը համարում են սոցիալական արդարության վերականգնումը (որը կատահովի հավասար բաժնում), մարդկանց հոգեւոր եւ նյութական կարիքների բավարարումը, սնտեսական աճի արդարությունը, համընդիանուր աղքատության եւ շահագործման վերացումը: Իսլամն առաջարկում է հասարակությունը կառուցել մահմեդականների եղբայրության, արդարության եւ

հավասարության սկզբունքի վրա, եւ ըստ այդմ՝ «ԽՍԼԱՄԸ ԹՈՒՅԼ չի տա իր նվիրյալներին մահանալ սովոր»:

1960-ականների վերջին եւ 1970-ականների սկզբին սկսեց բնարկվել նաեւ իսլամական սկզբունքներով ամրագրված միջազգային խսլամական սնտեսական համագործակցության հարցը: Շրջանառության մեջ դրվեց խսլամական նոր սնտեսական կարգուկանոնի հայեցակարգը, որի ամենահայտնի տեսաբաններից մեկի՝ Պակիստանցի Վ. Ջամդանիի կարծիքով՝ այն հիմնված է խսլամական հավասարության եւ արդարության սկզբունքների վրա: Խսլամը ո՞չ ռոպելության եւ ո՞չ էլ ժումկալության կողմնակից է: Այն միջին դիրք է գրավում, որ թույլ կտա փրկել ժամանակակից աշխարհը համընդիանուր աղետից:

1970թ. Ջամաճսարհային խսլամական կոնգրեսը, արձանագրելով այն փաստը, որ խսլամական դեւուրյունների ճնշող մեծամասնությունը դեռևս չի հասել սնտեսական իննուրույնության, առաջարկում էր լրջութեն գնահատել նեղուադութացման ստառնալիքը եւ սնտեսության բնագավառում ստեղծել խսլամական միջդեւական համագործակցություն: Քննարկման առարկա էին դարձել նաեւ համընդիանուր խսլամական ժուկայի, սեփական վայուտային գոտիների եւ, վերջադես, խսլամական տիրի բանկերի ստեղծման հնարավորությունները:

Աստիճանաբար, մահմեդական երկրների միջեւ խսլամական սկզբ-բունքներով ամրագրված սնտեսական համագործակցություն իրականացնելու գաղափարներն ավելի իրական դարձան: Եթե մինչեւ 1970-ական թվականները մահմեդական երկրների միջեւ սնտեսական համագործակցության կոչերը հեռու էին գործնական լինելուց, աղայ 1970-ականների սկզբին առաջ եկան նոյաստավոր դայմաններ, որոյնք հնարավոր լինի

ընդույնել եւ խորացնել իսլամական ղետությունների միջեւ ֆինանսատնտեսական եւ առեւտրական կաղերը: 1970-ականների սկզբին նավթային գների աճը հանգեցրեց համաշխարհային ժուկայում նավթարդյունահանող մահմեդական երկրների կառիտալի դերի մեծացմանը: Ֆինանսական արագընթաց եւ աննախադեղ հաջողությունները նոյաստեցին, որդեսզի Ծոցի երկրները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, ուրվագծեն իսլամական ղետությունների միջեւ Տնտեսական համագործակցության բաղադրականությունը եւ մեծ ներդրումներ անեն իսլամական քանկային համակարգում: Իսլամական Տնտեսական համագործակցությունը, որի կողորդիմացումը ստանձնեց Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ), օգնում էր «Երրորդ աշխարհի» մուսուլմանական երկրներին՝ հաղթահարել սոցիալ-Տնտեսական հետամնացությունը:

Դատկանաւական է, որ 1970 - 80-ականներին առանձին մահմեդական երկրներում (մասնավորապես Պակիստանում, Բանգլադեշում, Իրանում, Սաուդյան Արաբիայում, արաբական միավություններում) շարիաթական սկզբունքներ ներդրվեցին հարկային, վարկավիրման եւ գործընկերության դաշտում, ժառանգման իրավունքում, սեփականատրության աստանացում, ինչորև նաև՝ վաշխառուական տոկոսի եւ ստեկուլյատիվ գործարքների արգելման մեջ: Իսլամական սկզբունքների ներդրումը Տնտեսության ոլորտներում ճանադարի էր հարթում նաև դեղի միջազգային իսլամական համագործակցություն, որի իրականացման դեմքում, ինչորև հանովված էին իսլամական շրջանակներում, ումնամ կվերածվի կրթված, ստեղծագործ եւ նորացված մի համայնքի եւ կփորձի XX դարի վերջին հասնել զգալի առաջընթացի, հատկապես

իսլամական գիտության եւ տեխնիկայի բնագավառում, որդեսզի XXI դար մուտք գործի մյուս ժողովուրդների հետ հավասար: Իսլամական համագործակցության հիմնական փաստարկն այն էր, որ մահմեդական երկրները զարգացող աշխարհի մի հատվածն են եւ ներկայացնում են ինքնուրույն սնտեսական հանրություն: Այդ իսկ դաշտառով նրանք դեմք են միայն ընդլայնեն եւ խորացնեն համագործակցությունը, այլեւ ինտեգրվեն սնտեսադես: Այդ նորատակով ԻԿԿ Շրջանակներում 1970-80-ականներին ստեղծվեցին բազմաթիվ սնտեսական կառույցներ եւ օժանդակ մարմիններ, որոնց գործունեությունը խարսխվեց իսլամական սկզբունքների վրա եւ ուղղորդվեց իսլամական ժիղությունը:

ԻԿԿ կառույցներից թերեւս ամենակենսունակը 1975-ից մինչ օրս գործող իսլամական զարգացման բանկն (ԻԶԲ) է, որի հիմնական նորատակն է՝ աջակցել մահմեդական դետությունների, ժողովուրդների եւ համայնքների սնտեսական եւ սոցիալական զարգացմանը՝ համաձայն շարիաթի: Բանկի հիմնադրման փաստաթղթերում նշված է, որ անհրաժեշտ է իսլամական երկրներում աղահովել ներդաշնակ ու հավասարակշռված զարգացում, որ կրիստոնեական ու մնայի շահերից: Բանկի կանոնադրության մեջ նշված է, որ ԻԶԲ-ն իր գործարքները դեմք է իրականացնի՝ առաջնորդվելով իսլամի դասվիրաններով, որն արգելում է տոկոսներ գանձել փոխառությունների դիմաց եւ տոկոսներ վճարել ավանդների համար: Նման գործելակերպը դայմանավորված է իսլամական այն դրույթով, որը մերժում է ռիբան, այսինքն՝ վաշխառուական տոկոսը: Իսլամական այս սկզբունքին հավատարիմ մնալու մասին հիշատակված է իսլամական բոլոր բանկերի

համադատասխան փաստաթղթերում, սակայն միայն ԻԶԲ-ն է առավել ճշգրտուեն հետեւում այս դարտավորությանը:

Իսլամական զարգացման բանկը վարկային օգնության միջազգային ինստիտուտ է, որ ֆինանսական միջոցներ է տրամադրում մահմեդական ղետություններին ու համայնքներին եւ ունի այդ ինստիտուտին բնորոշ գծերը: ԻԶԲ-ն ֆինանսավորում է զարգացման ծրագրերն ու արտաքին առեւտուրը արտօնյալ դայմաններում, ձգտում ընդլայնել մահմեդական ղետությունների միջեւ առեւտամեսական կաղերը, տեխնոլոգիաների փոխանակումը: Բանկը միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների նման մեծ նշանակություն է տալիս Ենթակառուցվածքների ֆինանսավորմանը, որն անհրաժեշտ նախադաշտության է սնտեսական զարգացման եւ մասնավոր կաղիտալի ներհոսքի համար: Բանկը զգալի օգնություն է ցույց տվել ֆինանսական կարիքներ ունեցող գրեթե բոլոր մահմեդական ղետություններին եւ փորձարարական անհրաժեշտություններին՝ իրականացնելով տարաբնույթ ծրագրեր:

Իր գործունեության ընթացքում բանկն առաջնորդվում է նաեւ իսլամական այլ, ինչպես, օրինակ՝ մուսարաֆայի (բառացի՝ մասնակցություն) եւ նրա առանձին ձեւերի (մուտղարաբա, մուտղարահա, մուտղառադա, ֆիրադ եւ այլ) սկզբունքներով: Մուսարաֆայի սկզբունքը լայնորեն օգտագործվում է բանկային գործում եւ առեւտում, համաձայն որի ձեռնարկության եկամուտների բաշխման մեջ յուրաքանչյուր գործընկերոջ բաժինը սահմանվում է հատուկ դայմանագրով (ակղ), այլ ոչ թե նրան դատկանող կաղիտալի տեսակարար կը ունի: Ձեռնարկության վնասները բաշխվում են գործընկերների մեջ՝ համաձայն նախնական դայմանավորվածության: Մուսարաֆայի տարատեսակները, հատկապես, մուտղարաբայի սկզբունքը (մասնակցություն

եկամուտներում), կիրառվում են, մասնավորաբես, զարգացման ծրագրերի ֆինանսավորման եւ արժեթղթային գործարքներում: Արդյունհում՝ իսլամական սիրի բանկը ծեւականորեն տրամադրում է առանց տոկոսի վարկ որեւէ ծրագրի իրականացման համար, դայմանով, որ ստան եկամտի հաստատված իր բաժինը դրա իրազործումից հետո: Ելնելով այս սկզբունքից՝ բանկը կարող է իրականացնել շուկայում արժեթղթերի ցրամառություն: Այդդիսով, նա դառնում է ընկերակցային դայմանագրի մասնակից՝ չխախտելով ռիրայի արգելվը:

ԻԶԲ-ն ունի նաեւ ողորմածության՝ *զարարի* (բառացի՝ կրոնական հարկ-ողորմածություն) հավաքման գանձարան, որը կազմվում է բանկային շահույթի 2,5%-ից եւ առանձին մահմեդականների նվիրածվություններից: *Զարարը* իսլամական հավատի հիմք սյուներից մեկն է: Նրանից գոյացած միջոցները հիմնականում տրամադրվում են կրոնա- բարոզական գործունեությանը, մզկիթների տիմարարությանը, իսլամական կրթական հաստատությունների հիմնանը եւ, վերջարես, բարեգործությանը: *Զարարը* դիմում է որպես մահմեդականների նյութական վիճակը բարելավելու եւ հասարակության ներդաշնակ զարգացումը առահօվելու, իսկ ռիրան շահագործումը եւ կեղենումը արմատախիլ անելու միջոց:

Անհրաժեշտ են համարում նշել, որ չնայած իսլամական ցրամակների միջեւ համագործակցության համատեղ ծրագրերին, մահմեդական ղետությունները՝ սննդսական, ֆինանսական եւ տեխնոլոգիական կախվածության մեջ գտնվելով զարգացած երկրներից, «սառը դասերազմի» տարիներին չկարողացան անբողոքությամբ իրականացնել իսլամական համագործակցության իրենց մշակած

Տնտեսական ծրագրերը, չնայած այս հանգամանքին, որ 1970-80-ականներին նրանց միջեւ ծեւավորվեց կայուն համագործակցություն, կյանքի կոչվեցին բազմաթիվ համատեղ տնտեսական ծրագրեր, ֆինանսական զգալի օգնություններ ստացան դրա կարիքն ունեցողները:

«Սառը դատերազմի» ավարտից հետո, հայտնվելով միջազգային նոր իրադրության մեջ, մահմեդական դետությունները սկսեցին տնտեսական համագործակցության նոր սկզբունքներ մշակել: Իսլամական նոր ռազմավարության համաձայն՝ իսլամական տնտեսական համագործակցության նորածակը դեմք է լինի տնտեսական մեջ դաշինքների ծեւավորումը, որը թույլ կտա դիմակայելու միջազգային հարաբերությունների գլոբալ փոփոխություններին, մասնակցելու համաշխարհային ինտերացիոն դրույթներին: Մահմեդական դետությունների վերջնակետը դեմք է լինի տնտեսական սերտաճումը, որը դեմք է ընթանա իսլամական դետությունների սեր համագործակցության միջոցով: Իսլամական աշխարհի տնտեսական գործունեությունը դեմք է կազմի համաշխարհային տնտեսական կյանքի մի մասը, եւ իսլամական դետությունները, առանց վնաս հասցնելու իրենց ազգային եւ տարածաշրջանային հետարքություններին, դեմք է ամբողջությամբ մասնակից դառնան գլոբալ գործընթացներին, որոնք նորածակ ունեն ընդլայնել համաշխարհային դրամական, ֆինանսական եւ առեւտրական համակարգը:

Միաժամանակ, իսլամական տնտեսական ինտերացման ճանապարհին առկա են մի շարք խոչընդուներ, որոնք կաղված են իսլամական դետությունների զարգացման մակարդակների, սոցիալ-քաղաքական համակարգերի եւ իշխող վարչակարգերի միջեւ առկա տարբերությունների հետ:

Ինչ վերաբերում է սնտեսության իսլամականացմանը, աղա արդի ուսումնասիրողներից շատերի կարծիքով՝ այն չի կարող կենսունակ լինել, քանի որ սնտեսության մեջ կրոնական սկզբունքներով առաջնորդվելը արդյունավետ չէ: Յարկ է նույնը, որ թեև մահմեդական առանձին երկրներում սնտեսության մի շարք ոլորտներ ենթակա են շարիաթին, սակայն սնտեսության մեջ իսլամական սկզբունքները միշտ չեն, որ գործում են անխափան. դրանք հաճախ ցըանցվում են:

Այդուհանդերձ, մահմեդական երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում այսօր էլ մեծ թվով կադրեր են դատարասվում իսլամական սնտեսության գծով, իսլամական բանկային համակարգը նկատելի զարգացում է աղբյուր, եւ իսլամական բանկերը զգալի թիվ են կազմում արարական նավթարդյունահանող երկրներում: Սնտեսության մեջ իսլամական սկզբունքների ներդրումը այսօր էլ է կարեւորվում՝ հատկապես իսլամական աշխարհի եւ Արեւմուսի միջեւ առկա հակասությունների համատեքսում:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

ԴԱՅՈՅ ԴԱՅՈՅԵՆԻՔԸ.....	1
ՈՌՈՒԲԵՆ Սաֆրասյան ՊԱՇՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ.....	2
Գագիկ Տեր-Զարուբյունյան ԱՄՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ...9	
Գագիկ Տերտերյան ՈՌՈՒԲԱՏԱՆ. ՏԻՏԵՍԱԿԱՆ Աճի ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՉԼՈՒԾԿԱԾ ԴԻՄՆԱԽԱՆԴԻՐՆԵՐ.....20	
Դավիթ Դովիանինյան ՈՌՈՒ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐԿԱ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....27	
Մերակ Սարուխանյան ԻՐԱԱԾ ԽՈՐՃՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ.....38	
Սարգիս Զարուբյունյան ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԿԻՊՐՈՍՅԱՆ ՀԱՐԹԻՆ.....46	
Արամ Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....54	

**Շատրվանի վրա դատկերված է  
Վանի բերդը**

**«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ****

Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Յիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տղաֆանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» և «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տղագրվել է «Անարաս» տպարանում: